



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.


պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

20181



ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ

ՀԱՅՈՑ ՀԻՄՆԵԿԱՆ

ԵԿ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՑՑ

ԵԿԵՂԵՑՈՒ ԾԽԱԿԱՆ

ԿԸՆՈՆԸ ԴՐԱՒԹԻՒՆ

20181

ԹԱՐՐԻՑ 1903 թ.

Թեմական արագատիւն Ասրդուստիւնի Հայոց  
Յիշատակ վաղամեռիկ Եղիսաբէթ Միջարբէկեանի

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

ԱՅՐՎԱԾԱԿԱՆԻ ՀԱՅ ԺԱՇԱՎԱՐԴԻՆ.

„Զանօրէնսն ատեցի և զօրէնս քո սիրեցի : “  
„Ճրագ են բանք քո ոտից իմոց և լուս տան  
շաւղաց իմոց : “

„Յիրաւանց քոց ես ոչ խոտորեցայ, զի օրէնս-  
գլւտ արարեր զիս : “

„Սկիզբն բանից քոց ճշմարտութիւն է, յաւի-  
տեան են ամենայն իրաւունք քո : “

Այսպէս էր կրկնում Խորայէլի թաղաւոր Դա-  
վիթը իւր երգի և աղօթքի ժամանակ և վերև բե-  
րած կտորների նման՝ հաղարաւոր պարբերութիւն-  
ներ կան նրա սաղմոսների մէջ :

Ո՞րոնք էին Դաւիթի սիրած օրէնքներն, ինչումն  
էր Աստուծոյ բանը, որ լոյս էր տալիս նրա շա-  
փիդներին .

Ինչո՞ւ էր Եհովայի խօսքի սկիզբը ճշմարտու-  
թիւն և արդարութիւն էր նրա իրաւոնքը :

Սաղմոսերգուի յիշնալ խօսքերը վերաբերում  
են Մովսիսական օրէնքներին, որոնք հիմնաքար  
եղան՝ Խորայէլի մեծութեան, արագ բարգաւաճ-  
ման ու յառաջադիմութեան : Մի խաշնարած  
ազգ, ստրկացած օտարութեան՝ եղիպտացիների  
գերութեան մէջ, մի ազգ, որ մի միայն այլոց

ԳԵՂԱԳՆ  
ԱՏՎԱՐԱՐՈՒՆ  
33348.

20181

համսր աշխատելու տանըւել դիտելը, ստացաւ օրէնք անապատում, սոված ու ծաբաւ ժամանակ և մեծացաւ, տիրեց լրենից ուժեղ և հին ակզերին. տիրեց որովհետեւ օրէնսդիրը խեսցի հառատեսութեամբ սբբագործեց Սինայից բւրած տասը Աստղասների տափ տաները և որպէս Ս.ստածաւաբդի և Ս.ստածադադիր, օրէնքը և օրէնաց տախտաները համարեա պաշտամունքի առարայ դարձրեց և Սրբութիւն Սրբոց Լոււած Էտրանում մի միայն այդ տամարանեայ պատգասները կարուցան արժանաւոր տեղ գտնել:

Հին դարերի բոլոր օրէնսդիրները, համարեա առանց բացառութեան, աշխատում էին երջապարզեան հոչակել անձամբ մշակած օրէնքնելն և լրսնք հեռանում էին հարենիջից, որ ժողովուրդը ոռուանար նրանց մշակած օրէնքների մարդկային մտքի և կամքի արդիւնք լինելը, կապէր էւր դիցաբանութեան և կրօնական պաշտամունքի հետ և սրբագործէր լրեն համար: Սյդ ձեռով յաջողուում էր հետպհետէ լնտելացնել ժողովրդին օրէնքների և նրանց պահանջների հետ և լնդարձակ շափով գործադրելի դարձնել այն՝ ազգերի միջ: Մովսէսական օրէնքների հետեւանցները դիտենք. յայտնի են Սորոնի և Լիլուրդսի տարբեր ողով խմբագրաւած օրէնքների տարբեր հետեւանքները: Յայտնի է Հոռվմայեցոց օրէն-

դրութիւնը և նշանոյ ծերակոյտն (օշխաղիրներին) ուժեւ նայն առութիւնն ու նոյնպ ու յայտնի է մեզ նապօլ օնի, և այլ կողէկսների հետևան ները և այժմն էլ կը ուժեց մի ազգ ձգտութէ յառաջադիմութեան, ուշում է սահման զնել ուժեցի, բռնապետն, կամակորի, աննապանդի, ճնշման և այսպէս կոչւած, ամենայն տեսակ անօրէնների և անօրէնութեանց « դէմ, ամենից առաջ փոփոխում, խմբագրում և սրբագրում է օրէնքներ, ապա ստեղծում է գործադիր մարմիններ, եթէ այդպիսիք շըկան և աշխատենով յարգել տակ, ճանաչեցնել իւրաքանչիւր անհատին իւր պարտին ու իրաւունիւր, սահման է զնում ամեն տեսակ ոտնձգութեանց: Գեղեցիկ պարաւական բառ ունի հայ ժողովուրդը և երբ ուղում է ցոյց տալ մէկի անարդաւութիւնն ու բռնակաւութիւնը, անդթութիւնն ու աւագակութիւնը, կուարարութիւնն ու անհաշտութիւնը, նրան տալիս է « անօրէն » (օշխաղ չունեցող) անունը, ոչով ուղում է ցոյց տակ, որ անօրէնը ոչ մի սահման չէ ճանաչում իւր կենցաղավարութեան և աւագակութեանց ժամանակ:

Սակայն յաւեկով պլտջ է ասենք, որ հայ ժողովուրդը՝ բացի Մխիթար Գոշից, բացի եկեղեցական ժողովների որոշումներից և դրած կանոններից, հաւարեա թէ ուրիշ օրէնսդիրք չէ ունեցել և մեզ չէ հասել և այս բանին քիչ չէ նպաս-

տել մեր քաղաքա'լանապէս ստղիացած վհճա՛ն  
ու երեմն էլ մի միայն կիսանկախութիւնը։

Անօրէն (օրէնք չունցող) երկիրը այս պղտոր  
չուրն է, որի մէջ հնշտութեամբ ձուկ է ուսում  
ազահը, ճարպիկն ու ուժեղը, կաշառակերն ու  
անբարոյականը, որի համար խեղճի լացը, թոյի  
կրած զրկանքները մի տեսակ անհրաժեշտ բա-  
ներ են, որպէսզի նա հարստանայ այդ լացի և  
արցունքի գնով։

Ահա այս տեսակ երեսյթների առաջն առնե-  
լու համար է ստեղծւել օրէնքը. ստեղծւել եր-  
կար կույց, գոհերից և յեղափոխութիւններից  
յետոյ և ծառայել է իրեն վահան գորաւորների,  
խարեբանների և ճարպիկների դէմ։

Սուրբ գործ է օրէնք սահմանելը, բայց աւելի  
սուրբ է օրէնք պահեն ու պաշտելը, օրէնքով  
ապրեն ու օրինական հիմնարկութիւններ ունե-  
նալը։ Դժւար չէ խմբագրել գեղեցիկ օրէնշներ,  
բայց գժւար է օրէնքի առաջ զսպել եսը, կիրաք,  
անձնական շահը և երջանիկ է նա, ով օրէնք  
հասկանալ, սիրել և օրէնքով ապրել գիտէ։

Հրաշալի կրթաբաններ են այն հիմնարկութիւն-  
ները, որոնք խօսում, դատում և դատապարտում  
են օրէնքով և որտեղ բացի օրէնքից և մարդկա-  
յին արթուն խղճից ոչ մի կողմանի հանգամանք  
դոյութիւն ունենալու իրաւունք չունի։ Նոշա-

այդ հիմնարկութիւնները կը թում են մարդկանց,  
կը թում են աւելի, քան շատ և շատ դպրոցներ։

Թէ գու, սիրելի ժողովուրդ շատ սահմանա-  
փա'լ շրջան ունիս օրէնսդրութեան և օրէնքի  
գործադրութեան համար. թէ օրէնսդրիք ու  
իրաւունք պատումէ հայրենի եկեղեցուդ, առաջ-  
նորդիդ, քահանայիդ, դպրոցիդ և բարենպատա'լ  
լնիքութիւններիդ շուրջը, բայց և այնպէս այս-  
տեղ էլ մեծ պարտ ունիս կատարելու և բեղմ-  
նաւոր կինին այդ բոլոր հիմնարկութիւններդ,  
եթէ դու անշնդ օրէնքով առանորդւիս։ Նայէք,  
լաւ ուշադրութիւն գարձու այս մաշ'լանց վայ,  
որոնք այսօր ամեն քայլափոխում քո իրաւունք-  
ներիդ (չունեցած իրաւունքներիդ) անունիցն  
են խօսում։ Երբ և իցէ քեզ հաչիւ տւել ես, թէ  
նրանշ քո ո՞ր իրաւունշներդ են պաշտպանում։  
լաւ հետեւել ես, թէ նցանց իօսնցնողն ինչ  
է խկապէս։ Անցեալ և ներկայ՝ անօրէն զրու-  
թեանդ ժամանակ խօսովներն երբ և իցէ պաշտ-  
պանե՞լ են խկապէս քո իրաւունքներդ, ձայնդ,  
օրինաւոր ցանկութիւնդ, սրբութիւնդ, դպրոցդ  
և այն և այլն։ Ոչ երբէք նրանք այդ զեղեցիկ  
բառերով և զոյութիւն ունեցող անորոշութեամբ  
և անօրէնութեամբ մի միայն քո խկապան իրա-  
ւունշներդ են բռնաբարել և այդ յօգուտ մի-  
այն իրենց անձի և մանը ու չնչին շահերի։

Կարծում եմ, կարիշ չսնիս, ող ես մատա-  
նիշ լինիմ անցած զարձաւների վրայ. կարծում  
եմ, կարիշ չլայ, որ ես բանամ ստացած վ ը-  
քերդ, որոնց ցատերը տանչում են քեզ ցաւե-  
րով, իսկ ցատերի բերաններն էլ դեռ ապագա-  
յում պէտք է բացւին և ժահրահոս ու ժահահոտ  
լինին:

Բայց լաւ է ուշ, քան' երբէք. այսօր զու բար-  
դաւոր ես, որ Հայրապետական գահութից շնորհ-  
ւում է քեզ այսպիսի հրաշալի ինքնավարութիւն  
եկեղեցական ազգային զործերէդ մէջ և քեզ է  
մնում այսուհետեւ բեղմնաւորելու ստացած իրա-  
ւունցդ ու ձանդ: Եթէ համեմատելու լինիս ստա-  
ցածդ քո եղբայրակիցներէդ ունեցածի հետ,  
պէտք է համոգւիս, որ որպէս պարսկահայի չեղ  
ամենից շատ է տրւել և տայ Աստւած, ող գու  
իւելացի զործուն՛ութեամբդ աշխարհին ցոյց տալ  
կարողանաս, որ փաղուց պատշաստ ես ըմբռնե-  
լու և զործաղբելու իրաւունցդ և օրէնքը խելա-  
ցի հեռատեսութեամբ:

Խոկ ինձ մնում է աշո՛թել նորին Վեհա-  
փառութեան արեշատութեան համար, որ գուտ  
Հայրական և Հայրապետական սիրով տւաւ քեզ  
այսպիսի զեղեցիկ զործ և նրա նախաձեռնու-  
թիւնը: Պարտք եմ համարում շնորհակալութիւն  
յայտնել Թաւրէզի խմբազրական մասնաժողովի

յարդելի անդամնեցին՝ պ. Զաշարէիա Նաղարբէ-  
կեանին, Գոգտոր Կ. Փաշայեանին, Աւագ խան  
Սփթանդիկեանըն և պ. Ատրպետին, որոնց սի-  
րով լնդունեցին կոչս և բաւական ժամանակ և  
աշխատանք զոհեցին ովզբնական կանոնադրու-  
թեան խմբազրութեան վրայ: Նոյպիսի շնորհա-  
կալութիւն եմ յայտնում Տիփխոսոմ կազմւած վե-  
րաննող և սկզբանական կանոնադրութիւնը սրբա-  
գրողյանձնաժողովի պ. պ. Անդս մնելին՝ Ա. Է. Չ-  
սան Մելիք Ազարեանին, Ադրբանդը Քաշանթա-  
րին, բժիշկ Նաւասարդեանին, Տիգրան Յովհան-  
նիսիանին, Ստեփաննոս Մալասեանին, Համ-  
բարձում Սուաքեանին, Վարդան Թումանեանին,  
Ղազարոս Ադայեանին, Ստեփան Լիսիցեանին և  
այլոց, որոնք չկացան նւիրել իրենց հմտութիւնն  
ու վորձառութիւնը՝ սոյն կանոնադրութիւնը մշա-  
կելս: Նոյնպիսի շնորհակալութիւն եմ յայտնում  
և երբորդ ու գերջին Մասնաժողովի անդամնե-  
րին՝ Յուսիկ սրբազնին, Կորին և Մատթէոս  
վարդապետներին, Միարան Գալուստ Տէր Մէլտ-  
շեանին պ. պ. Միքալան Տիգրանեանին և Մա-  
սնադեանին, որոնց ամենան համբեցութեամբ վե-  
րաննեցին Տիփի լսի և Թաւրէզի մասնաժողով-  
ների խմբազրածը և հասցըին ներկայ դրութեան,  
որը հաստատելով նորին սրբութիւն Ամենայն  
հայոց Վեհափառ Ծերւնազարդ Հայրապետից՝

տրւում է այսօր քեզ՝ սիրելի ժողովուրդ, զործադրութեան ի լիշատակ նորին Սրբութեան հայրապետութեան տասնամեակի: Չեմ կաբող մոռանալ մի պարտք ևս, որ զրւած ու ծանրացած է վրաս՝ — չեմ կարող մոռանալ բարեգործ Գէ-որդ և Մլրգաջան Մլրգաբէկեաններին, որոնք վաղամեռիի փոքրիկ Եղիսաբէթի յիշատակին արադատիպ տվին քեզ՝ միակը ամբողջ արևմտեան պարսկաստանում, որով այսօր տպագրւում է այսպիսի գեղեցիկ զործը: Ինձ թւում է, որ այսօր այդ անմեղ զառնուկը՝ հրեշտակի փոխւած՝ մատուցանում է քեզ սոյն աննման լնծան, ով Ատրպատականի հայ ժողովուրդ, որպիսին ստանալով, հաւատացած եմ, կազօթես ինձ հետ, որ երկար կեանք պարզեցի Արարիշը բարեգործ եղբայրներին՝ իրենց ընտանիքներով, իսկ ֆիզիքապէս վաղամեռիկ Եղիսաբէթին՝ յաւիտենական անմահութիւն:

Տայ Աստւած, որ ես և զու, սիրելի ժողովուրդ, Քաւթի նման, տարիններից յետոյ բացականչել կարողանանք. — Յիրաւանց քոց մեք ոչ իոտորեցաք, զի օրէնսգէտ արարեը մեզ:

” ծրագ են բանք քո ոտից մերոց և լոյս տան շաւղած մերոց ”:

Առաջնորդ Ատրպատականի՝

Եղիշէ Ծ. Վ. Մուրադեան.

## ՅԱՅՏԾԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

Ա.ՏՐՊԱ.ՏԱԿԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ  
Ա.ԲԱ.ԳԱ.ՏԻ.Պ ՏՊԱ.ԲԱ.ՆԻ ՎԱ.Բ-  
ԶՈՒԹԻՒՆԸ ՊՅ.ՏԻ.Պ ՈՒՆԻ ՅԱ.Յ-  
ՏԱ.ԲԱ.ՐԵԼՈՒ, ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄ  
Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԱ.ՏԻ.ԷՐՆԵՐ  
ՀԱ.ՅԵՐԵՆ, ՌՍԵՐԵՆ, ՖՐԱՆՍԵ-  
ՐԵՆ ԵՒ ՊԱ.ԲՍԿԵՐԼԻՆ ԼԵԶՈՒ-  
ՆԵՐՈՎ. ԳՆԵՐԸ ՄԱ.ՏԶԵԼԻ ԵՆ.  
ՊԱ.ՏԻ.Է.ՐՆԵՐԸ ԿԱ.ՏԱ.ՐԻՈՒՄ ԵՆ  
ԽՆԱՄՔՈՎ ԵՒ ՇՈՒՏ:

ՆՈՅՆՊԷՍ ՅԱ.ՅՏԱ.ՐԱՐԻՈՒՄ Է  
ԲՈԼՈՅ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ, ՈՐ ՈՒ-  
Բ.ԽՈՒԹԵԱ.ՄԲ ՅԱ.ՆՉՆ Է Ա.Ո-  
ՆՈՒՄ ՀՐԱ.ՏԱ.ՐԱԿԵԼ ԺՈՂՈՎՐ-  
ԴԱ.ԿԱ.Ն ՄԱ.ՏԶԵԼԻ ԳՐՔԵՐ, ՏԱ-  
ԼՈՎ. ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ, ԶԱ.ՓՈ.Ն-  
ԻՈՐ ԵՒ ՀԱ.ՄԵՍՏ ՎԱ.ԲՉԱ.ՏՐՈՒ-  
ԹԻՒՆ:

ՄԿՐՏԻՉ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԽԻ  
ՔԲԻՍՈՍԻ ԵՒ ԱՆՀԱՌԱՆԵԼԻ  
ԿԱՄՈՔՆ ԱՎՏՈՒԾՈՅ ԵՊԻՍԿՈ-  
ՊՈԽԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՒՂԻԿՈՍ  
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԾԱՅՐԱԳՈՅՆ  
ՊԱՏՐԻԱՐք ՀԱՄԱԶԳԱԿԱՆ  
ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅՅՈՅ ԱՐԱ-  
ՐՈՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ  
ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՐԲՈՅ ԿԱԹՈՂԻԿԵ  
ԷԶՄԻԱԾՆԻ

Հարազատ և սիրեցեալ որդւոց Մօրս Լուսոյ Ս.  
Կաթողիկէ Եշմիածնի՝ պատուական ժողովր-  
դեան Խոյ, բնակելոյ ի Տիրախնամ վիճակն Ատր-  
պատական աշխարհի՝ ողջայն, սէր և օրհնութիւն  
ի Հայրապետէս համայն ազգիս Հայոց :

---

Որք առաջնորդք հանգիսացան բանաւոր հօ-  
տին Քրիստոսի՝ ընտրեալք յազգմանէ Ս. Հոգւոյն  
և կարգեցան տեսուչք եկեղեցւոյն Աստուծոյ,  
հովիւք և հօտապետք հարք եկեղեցւոյ, չան նոցա  
եղեւ և վաստակ մշտաքիրտն անստերիւք վարդա-  
պետութեամբ Աւետարանական ճշմարտութեան

և կանոնիւր Եկեղեցւոյ Սրբոյ առաջնորդել զհօսն  
բանաւոր յուղիդ և ի լուսաւոր շաւիդ քրիստոնէ-  
ական հաւատոյ, առ ի կենցաղավարել նոցա ըստ  
Աստուածազիր օրինաց և բանական խղճի ի լինել  
նոցա բարիս, առաքինիս և երջանիկս, որոց սակի  
կազմեցան կանոնք—կանոնիր վասն թաղաւորաց,  
իշխանաց, հայրապետաց, առաջնորդաց, հովուաց  
և ժողովրդեան՝ առ ի տալ զիտել իւրաքանչիւրոցն  
զպարտիս պաշտամանց իւրեանց և զսահմանս  
իրաւասութեանց և պարտուց. քանզի ուր ու  
թագաւորեն օբէնք, անդ են ամենայն անկար-  
դութիւնք և շփոթութիւնք: Զարդիս իսկ ի հրա-  
պարակի զնոյն նկատենք—զօրէնս և զօրէնսզրու-  
թիւնս պետութեանց աշխարհիս, կազմեալս և  
հաստատեալս ըստ իւրաքանչիւր ձեռոց կառավա-  
րութեանց. և որպէս բարձր և վայելուշ են օբէնք  
և սահմանադրութիւնք, որը ազատօրէն տան յար-  
գել հզօրին և տկարին զանհատական իրաւունս  
յիւրաքանչիւր Ատեանս հաւատրապէս և համար-  
ձակապէս:

Ի վերջին կիսամեկի անցեալ ինն և տասնե-  
սորդ զաբու կազմեցին և ընկալան տամկահայ ժո-  
ղովուրդն զառանձին սահմանադրութիւն իւրեանց,  
վաւերացեալ յօսմանեան պետութեանէ և յարդ այ-  
նու վարեն զԱզգային վարչական զօրծու իւրեանց  
ընդ զեկավարութեամբ Պատրիարքացին Հայոց Կ.

Պօլսոյ: Նոյնպէս և հայք զաղթեալք յՈմերիկա,  
որք այսօր կազմեն տոանձին թե: Հայապետական  
ընդ Առաջնորդութեամբ միոյ Եպիսկոպոսի և հոգ-  
ութեան քանի մի հոգեուրականաց, ունեցան զսահ-  
մանադրութիւն իւրեանց՝ հաստատեալն ի մէնջ,  
որք և այնու— վարին զարդիս յազատ աշխարհն  
Ամերիկայի:

Ի շարս այսօրինակ յառաջադիմութեանց ժո-  
ղովրդեան Մերոյ և զարգացման՝ գոհ և ուրախ  
եղաք տեսանելով և զնոյն ոգի յառաջադիմութեան  
ի Զեղ, ո պատուական ժողովուրդ Ատրպատակա-  
նի, որ նախաձեռնութեամբ Առաջնորդին միհա-  
կիդ Տ. Եղիշէ ծ. Վարզապետի մատուցաւՄեզ նա-  
խապիծ մի կանոնադրութեան և միխիթարութիւննէ  
Մեզ տալ Զեղ այսօր զայն կանոնադրութիւն հաս-  
տատեալ, նախապէս անցեալ ընդ ձեռն երից  
մասնագէտ և կանոնագէտ Յանձնաժողովոց, յորոց  
վերջինն յոյժ զզուշաւոր և մանրազննին քննու-  
թեամբ աւարտեալ՝ հաւան դտաւ ի Մէնջ և հաս-  
տատեցաւ իսկ: Ընկալ արդ, սիրեցեալ ժողովուրդ  
նմ Ատրպատականի, զայս կանոնադրութիւն եկե-  
ղեցական վարչական զործոց քոց և սովու ըն-  
թացիք յուղիդ և անշեղ ուղին, որ առաջնորդէ  
Քեղ՝ ի լոյս, յառաջադիմութիւն, ի կրթութիւն և  
ի զարգացում: Սրբութեամբ պահեած զայդ կա-  
նոնադրութիւն և ուղիդ մտօք հետեւող յեր ընդ

ցուցեալ շաւիզս նորա և մի լիցի Քեզ երբէք  
թողուլ զայն և զանցառու գտանիլ, զի  
ունիս մնալ պարտական առաջի Ազգիս, Եկե-  
ղեցւոյ և Մեր. քանզի հազիւ ուրեմն յաջողեաց  
Մեզ հարթել զնախիլին դժւարութիւնս և բառնալ  
դժարբեր ուզգութիւնս տարբեր անձանց առաջ-  
նորդ Քեզ հանդիսացելոց: Եւ Մեր ադօթս առ-  
նեմք, զի Գու լիցիս ծաղկեալ և պտղարերեալ  
ամենայն առաքինութեամք և ազգօգուտ գործովք  
ի փառս Ս. Եկեղեցւոյ Մերոյ և ի պարծանս Արե-  
գակնավայլ և Լուսամիտ Վեհապետին, որ յամե-  
նայնի քաջալեր հանդիսանայ յառաջադիմութեան  
Քո և բարզաւաճմտն:

Խոկականի վրայ ստորագրած է՝

### ՄԻՒՏԻՉ ԿՐՈԹՈՒԴԻԿՈՍ ՌՄԵՆԵՑՆ ՀԵՅՈՅ:

Դ - Ն Փետրուարի 1903 ամի

և բատ Տօմարիս Ռ. Յ. Օ. Բ.

Ի Հայրապետութեան Մերում Ժ. ամի  
ՀԱՐԱՐԴԱՏԵԱՆ Մայր Ըժոռ Ս. Կըմիածնի

Ի Վաղարշապատ :

թ. 198

### Ա. Ք' ՊՀՀԱՆՈՒԹԻՄ ԿԵՆԱՅՆՆԵՐ

1. Երանի Վեհապետաների շնորհած բազմաթիւ  
հարձրագոյն հրավարտակների համաձայն՝ Պարս-  
կաստանի հայ ժողովուրդը ազատ է կատարելու իւր  
կրօնական պաշտամունքը և կառավարելու իւր Եկե-  
ղեցական համայնական գործերն ըստ Հայաստա-  
նեալց Եկեղեցու կանոնների և ծէսերի ամբողջ  
Պարսից Պետութեան սահմաններում Արեգակնալիքի  
ՅԵՀԵՂԵԶՅ Բարձր Հոգածառութեան ներքոյ:

2. Ատրպատականի Հայոց Եկեղեցին և համայն-  
քը՝ իբրև Հարազատ ժառանգներ Ս. Լուսաւորչի  
Գահի և Մայր Աթոռի, ենթարկուում են Ն. Վ.  
Ամենալն Հայոց Հոգածառութեան Շալրապոյն Խիս-  
նութեան:

3. Ատրպատականի Եկեղեցական համայնական  
բոլոր պաշտօնեաները՝ թէ հոգեւորական և թէ աշ-  
խարհական՝ իրենց փարչական գործնէութեան շըր-  
ջանում ենթակալ են Թէմական իշխանութեան իրա-  
ւասութեան:

4. Ատրպատականի Հայոց Համայնքը՝ իւր կրօ-  
նական և Եկեղեցական համայնական գործերում  
կախւած է միմիալն Հայաստանեալց Եկեղեցու իշ-  
խանութիւններից, որոնք առաջնորդւում են Հայոց

Եկեղեցու կանոնական իրաւունքով:

5. Իրանի Վ.եհապետների շնորհած Բարձրագոյն ֆիրմանների համաձայն՝ Հոգևոր աստիճան ունեցող հայերը՝ իրենց ընտանիքով հանդերձ՝ ազատ են մարմնական պատժից, ամեն տեսակ հարկերից և բէգեառից:

6. Ատրպատականի բոլոր հայ Հոգևորականներն ու Եկեղեցական-Համալնական պաշտօնեանները կարող են իրենց հաւատարիմ և եռանգուն պաշտօնավարութեան համար պարգևատրւիլ Իրանի ՊԲ-ՊԱԿՆԵՓԸՅ. ԾԸՀԿԸՇ. և Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսից՝ Ատրպատականի Թեմական Փողովի որոշմամբ և Թեմի Առաջնորդի միջնորդութեամբ:

7. Հայոց Եկեղեցական-Համալնական, կրթական կամ բարեգործական հաստատութիւն, (գրգարան, ընթերցարան, հիւանդանոց, որբանոց, ուսումնարաններ և այլն) պիտի լինին սեփականութիւն որևէ Եկեղեցու կամ վանքի և չեն կυրող անկախ և լնքնուրոյն իրաւարանական անձի գոյսութիւն ունենալ:

Այդ հաստատութիւններից իւրաքանչիւրը իրեն լատկացւած գոյքից օգտառում է և կառավարութեր լատուկ կանոնադրութեամբ:

8. Իւրաքանչիւր ծխական Եկեղեցու կամ վան-

քի պատկանող, այլև որևէ կրթական կամ բարեգործական - Եկեղեցական-Համալնական հաստատութեան լատկացւած գոյքերը համարւում են ընդհանուր-անձեռնմխելի սեփականութիւն Հայաստանեաց Եկեղեցու: Այս մասնակի կրթական և բարեգործական հաստատութիւններից որևէ մէկի փակման դէպքում՝ նրան լատկացւած գոյքը ենթարկում է այն ծխական Եկեղեցու կամ վանքի տնօրինութեանը, որին պատկանում էր նոյն հաստատութիւնը. իսկ որևէ ծխական Եկեղեցու կամ վանքի փակման դէպքում նրա գոյքը ենթարկում է Թեմական ժողովի տնօրինութեանը:

9. Ատրպատականի Թեմի Կառավարութիւնը՝ Հայոց Եկեղեցու հնաւանդ սովորութեան համաձայն հիմնւած է ընտրական սկզբունքի վերաբ:

10. Ատրպատականի Թեմում ձայն և քուէ տալու այլ և ընտրւելու և պաշտօններ ստանձնելու իրաւունք ունին այն բոլոր թէ Հոգևորական և թէ աշխարհական ազգայիններ, որոնք առնւազն վեց ամիս ապրել են թեմի միենոյն տեղում, վճարել են Եկեղեցական համալնական պատշաճաւոր իշխանութիւններից սահմանւած բոլոր Եկեղեցական և թեմական տուրքերը և 21 տարեկանից պակաս չեն: Յատկապէս Թեմական ժողովի և Թեմական Խորհրդի անդամ ընտրւելու իրաւունքից օգտառում են 80

տարեկանից վեր հասակ ունեցողները:

11. Աչ ոք չի կարող միաժամանակ երկու այնպիսի պաշտօն ստանձնած լինել որոնցից մէկը ենթակալ է միւսի վերահսկողութեանը և հաշւառութեանը՝ բացի լատկապէս լիշւած դէպքերից:

12. Սին պաշտօնեաները, որոնք որեւէ անձնական շահ ունին Ատենում խորհրդածութեան նիւթ գարձած և վճռւելիք խնդրում կամ եթէ ալդ խըդիրն իրենց է վերաբերում, նոյն ալդ խնդրի մասին խոհրդածութեան և վճռահատութեան չեն կարող մասնակցել ձայնի իրաւունքով կամ նախագահել:

13. Բոլոր պաշտօնեաները՝ թէ հոգեորական և թէ աշխարհական, թէ պատւաւոր և թէ վարձատրելի, վերնտրելի են՝ բացի լատկապէս լիշւած դէպքերից:

14. Բոլոր ժողովների, խորհուրդների և այլ բազմանձնեալ Ատեանների նխոտերը համարում են կանոնաւոր, երբ ներկալ է լինում անդամների մեծամասնութիւնը՝ ընդհանուր թւի կիսից աւելին՝ բացի լատկապէս լիշւած դէպքերից: (Յօդ. 28):

15. Բացի լատկապէս լիշւած դէպքերից (Յօդ. 28) բոլոր ընտրութիւնները կատարում են գաղտնի

քւէարկութեամբ և ձայների հասարակ մեծամասնութեամբ: Ձայների հաւասար բաժանման գէպքում գերակշռում է այն կողմը, որին նախագահը տալիս է իւր ձայնը:

16. Թէմապատկան հասովթների աղբեւրներն են.

ա. Թէմական եկեղեցական-համալինական տուրքեր և թղթատուրքեր. (Յօդ. 30, ժը.):

բ. Թէմական անշարժ և շարժական գուքերի հասովթներ:

գ. Թէմական մոմավտճառութեան կրապակից, թէմական տպարանից և այլ ձեռնարկութիւններից ստացւելիք եկամուտներ:

17. Նարժական և անշարժ եկեղեցական-համալինական գուքեր գնել կարելի է մինչեւ 50 թուժանի՝ Ծխական ժողովի որոշմամբ և Գործակալութեան Խորհրդի թուլութեամբ, իսկ լիսուն թուժանից բարձր՝ Թէմական Խորհրդի որոշմամբ:

18. Եկեղեցական-համալինական շարժական և անշարժ գուքերը ծախել կամ փոխանակել կարելի է մինչեւ 250 թուժանի Թէմական Խորհրդի որոշմամբ, մինչեւ 1000 թուժանի Թէմական ժողովի որոշմամբ, իսկ դրանից վեր—Թէմական ժողովի որոշմամբ և Ամենայն Հայոց Կաթողիկոսի թուլաւութեամբ:

19. Ատրպատականի թեմում սովորական պսակ՝ ների հրամանը տալիս է գործակալ քահանան. չըհասութեան կասկածելի դէպքերում թոլլտութիւն է տալիս Թեմակալ Առաջնորդը. իսկ արտակարգ դէպքերում դիմելու է Ն. Վ. Ամենալն Հայոց Կաթուղիկոսին:

20. Թաւրիկ քաղաքը՝ որպէս Ատրպատականի թեմի վարչական կենդրոն՝ Թեմակալ Առաջնորդի աթոռանիստ քաղաքն է: Թաւրիկի Առաջնորդարանումն է գումարելում Թեմական Խորհուրդը: Առաջնորդարանի ներքին մատակարարութիւնը (քաշի կահաւորութիւնից) հոգում է իւր ոռձկի հաշւից Թեմակալ Առաջնորդը:

Պատշաճաւոր իշխանութեան հրամանով և պաշտօնական գործով ճանապարհորդելիս՝ պաշտօնեաները կարող են ճանապարհածախս ստանալ (Թեմական Խորհրդի հրահանգի համաձայն կամ թեմապատկան, կամ ծխական գումարներից և կամ ի հաշիւ գործին մասնակից մասնաւոր մարդկանց):

22. Այս հիմնական կանոնագրութիւնը լրացնել փոխիսել, կամ որևէ յօդւած գուրս գցել կարելի է (Թեմական ժողովի որոշմամբ (28) և Ն. Վ. Ամենալն Հայոց Կաթուղիկոսի թոլլտութեամբ:

## I. ԹԵՄԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆ

### C. ԹԵՄԱԿԱՆ ԺՈՂՈՎ.

23. Պարբերաբար՝ ամեն չորս տարին մի անգամ՝ Ատրպատականի հայ ժողովուրդը՝ թեմական ժողով կազմելու համար պատգամաւորներ է ընտրում չորս տարի ժամանակով: Պատգամաւորների լիազօրութեան քառամեալ ժամանակամիջոցը լրանալուց երեք ամիս առաջ՝ թեմական Առաջնորդը կամ սրան փոխարինող Տեղապահը, իսկ սրա էլ բացակայութեան դէպքում թեմական խորհրդի աւագ անդամը լրջաբերական է ուղարկում թեմի բոլոր եկեղեցիներին, հրաւիրելով ներկալացուցիչներ ընտրել գործակալութեան ժողով գումարելու և պատգամաւոր ընտրելու համար: Ծխական ժողովներից ընտրւած ներկալացուցիչներից (լ. 19թ. Ճ.) գործակալութեան ժողովներ են գումարելում, որոնք և ընտրում են պատգամաւորներ Թեմական ժողովին անդամակցելու համար: Իւրաքանչիւր գործակալութեան ժողովն ուղարկում է առնուազն մի պատգամաւոր, իսկ բազմամարդ գործակալութիւնները՝ իրենց համայնքի իւրաքանչիւր 200 տան համար ուղարկում են մի մի պատգամաւոր:

(Վերջին 200 -ը կարող է լրիւ չըլինել, բայց ոչ  
պակաս 101 -ից):

Ծն. Ա. Պատառացիք կարող են պատգամաւոր  
ընտրել նաև Թաւրիզաբնալիներից կամ  
դրսեցիներից:

Ծն. Բ. Իւրաքանչյուր պատգամաւոր պէտք է  
Թեմական ժողովին ներկայանալ իրեն  
լիազօրութիւնը հաստատող վկայակա-  
նով, որը ստորագրւած պէտք է լինի  
գործակալութեան ժողովի նախագահից  
և անդամներից և վաւերացրած դոր-  
ծակալական խորհրդի կնքով:

Ծն. Գ. Որևէ գործակալութեան ժողովից ընտ-  
րած պատգամաւորների հրաժար-  
ման, տկարութեան կամ մահւան դէպ-  
քում տեղի է ունենում պատգամա-  
ւորի մասնակի նոր ընտրութիւն յատ-  
կապէս այդ գործակալութեան համար:  
Այս մասնակի ընտրութեան պատճա-  
ռով Թեմական ժողովի նիստերը չեն  
լետաձգւում:

Ծն. Դ. Հին պատգամաւորների լիազօրութիւնը  
շարունակում է մինչև նոր պատգա-  
մաւորների ընտրութիւնը:

Ծն. Ե. Թեմական ժողովի կազմի և սրա մէջ  
տեղի ունեցող փոփոխութիւնների մա-

սին Թեմական Առաջնորդը իւրաքան-  
չյուր անգամ զեկուցանում է Ն. Վ.  
Ամենայն Հ. Կաթուղիկոսին:

24. Պատգամաւորը բացակայելիս կարող է օրի-  
նական թղթավոր իւր ձայնի իրաւունքը յանձնել մի  
ուրիշ պատգամաւորի: Ամեն մի պատգամաւոր՝  
բացի իւր ձայնից՝ կարող է ունենալ միայն մի  
աւելորդ ձայն:

25. Պատգամաւորներին ժողովի հրաւիրելու  
իրաւունք ունին 1) Թեմի առաջնորդը, 2) Պատ-  
գամաւորների կէս ( $\frac{1}{2}$ ) մասը, և 3) Թեմական  
Առաջնորդի բացակայութեան ժամանակ՝ Առաջ-  
նորդական տեղապահը:

26. Թեմական ժողովը սովորաբար գումարում  
է երկու տարին մի անգամ: Անյետաձգելի հար-  
ցեր վճռելու համար՝ հարկ եղած դէպքում՝ բա-  
ցի այդ սովորական նիստերից, կարող են գումար-  
ել Թեմական ժողովի նաև արտակարգ նիստեր:

Ծն. Ա. Պատգամաւորների ընտրութեան հա-  
մար Թեմական Խորհուրդը նշանակում  
է որոշ ժամանակամիջոց, որից անմի-  
ջապէս լետոյ Թեմ: Առաջնորդը կամ  
սրան փոխարինող Տեղապահը և կամ  
սրանց բացակայութեան դէպքում Թե-  
մական Խորհրդի աւագ արդամը պար-

տաւոր է պատգամաւորներին Թեմական ժողովի հրաւիրել, ինչպէս և առհասարակ Թեմական ժողովի սովորական նիստեր գումարելու դէպքում :

**Ծն. Բ.** Թեմական Առաջնորդի մահւան, հրաժարման կամ հրաժարեցնելու դէպքում պատգամաւորներն անմիջապէս ժողովի են հրաւիրում Առաջնորդընտրելու :

**Ծն. Գ.** Թեմական ժողովը գումարում է Թաւրիզի Մալը եկեղեցում : Թեմ. Առաջնորդը, Թեմ. Խորհուրդն և քարտուղարը ներկայ են լինում Թեմ. ժողովին Հարկաւոր տեղեկութիւններ հաղորդելու համար :

27. Թեմական ժողովի պատւաւոր նախագահն է Թեմ. Առաջնորդը. իսկ ժողովի նիստերը կառավարում է առանձին Ատենապետ, որին ժողովն ընտրում է իւր անդամներից իւրաքանչիւր նստացրջանի համար :

28. Թեմական Առաջնորդին հրաժարեցնելու և այս հիմնական կանոնագրութիւնը փոփոխելու ուղացնելու հարցերը վճռուում են բոլոր պատգամաւորների ձայնից ( 2 ) երկու երրորդ բազմութեամբ :

29. Թեմական ժողովն իւր միջից կամ գրաից

ընտրում է մի քարտուղար, որ կազմում է ժողովի նիստերի արձանագրութիւնը :

**Ծն.** ժողովի արձանագրութիւնները վաւերական են երբ վաւերացւած են, ներկայ եղող պատգամաւորների մեծամասնութեան ստորագրութեամբ. իսկ 28-րդ յօդւածում նախատեսնւած դէպքերում պատգամաւորների <sup>2</sup> մասի ստորագրութեամբ :

**30.** Թեմական ժողովի իրաւունքները .

ա. Թեմ. ժողովն իրաւունք ունի սահմաններու և հրատարակելու ամբողջ թեմի բոլոր գործերի և եկեղեցական համայնական հիմնարկութիւնների և հաստատութիւնների համար պարտագիր կանոնագրութիւններ, զեկավարելով Հայոց կանոնական իրաւունքով և այս հիմնական կանոնագրութեան սկզբունքով, նախագէս ներկայացնելով իւրաքանչիւր կանոնագրութիւնը ն. Վ. Ամենալի Հայոց Կաթուղիկոսին ի հաստատութիւն :

բ. Թեմական ժողովը վերին և ընդհանուր հըկողութեան և Հաշվառութեան իրաւունք ունի թեմի բոլոր եկեղեցական-համայնական գործերում :

գ. Թեմական ժողովը պատգամաւորներ է ընտրում թեմի կողմից Հայաստանեալց եկեղեցաւ համագումար Ծալրագոյն ժողովին և այլ եկեղեցական-համայնական ընդհանուր գործառնութեանց մասնակցելու համար :

գ. Ընտրում և հրաժարեցնում է թեմ. Առաջնորդին Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի հաստատութեամբ. (28):

Ե. Որոշում-է իւրաքանչիւր քառամեակի համար թեմ. Առաջնորդի և այլ պաշտօնեաների ոռծիկը:

Գ. Քննում և որոշում է նոր վանքեր հիմնելու խնդիրը:

Է. Ընտրում և հրաժարեցնում է պաշտօնից թեմ. Խորհրդականներին, փոխ-խորհրդականներին (42, 43) և վերաստուգող յանձնաժողովի անդամներին:

Ը. Քննում է թեմ. Առաջնորդի գէմ ծագած բողոքները: Առաջնորդի գէմ ծագած բողոքներն և ներկայացնում է Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսին: Քննում և վճռում է թեմական Խորհրդի գէմ ծագած բողոքները:

Թ. Քննում և հաստատում է առաջիկալ երկամեակի համար թեմական Խորհրդի կազմած թեմական ընդհանուր նախահաշիւը:

Ժ. Քննում և հաստատում է թեմ. Խորհրդի անցած երկամեակի հաշիւը՝ նախապէս լսելով վերաստուգող Յանձնաժողովի գեկուցագործիրը:

Ժա. Զանագան խնդիրների ուսումնասիրութեան համար, ինչպէս և այլ յանձնաբարարութիւններ կատարելու՝ պէտք եղած դէպքում ընտրում է յանձնաժողովներ, իրաւունք ունենալով՝ կարևոր գէտ-

քերում դրսից ձեռնհաս մարդկանց հրաւիրելու: Ժբ. Սահմանում և մանրամասն հրահանգով որոշում է թեմական - եկեղեցական - համայնական տուրքերի (օր. Լուսաւորչի լուման, պտղին, աթոռահաս պսակադրամը, լուսագլխը, հոգեբաժինը . . .) և թեմական, գործակալական ու ծխական խորհուրդներից արւազ, հաստատող և վաւերացւող վաւերաթղթերի համար վճարելիք թշղթատուրքի տեսակները, քանակը, բաշխման և դանձման ձևը:

Ծն. Սատցւած տուրքի մասին արձանագրւում է ժամաւինեալ մատեանում և վճարողին ստացագիր արւում, իսկ վերցրած թղթատուրքի քանակը նշանակւում է նաև նոյն վաւերաթղթի վերայ:

Յ1 Թեմական ֆողովի խորհրդածութեան և վճռահատութեան առաջարկող խնդիրներն յանձնւում են թեմ. Առաջնորդին, որը թեմական ֆողովի Ատենապեաի և թեմական ֆողովի ու թեմական Խորհրդի քարտուղարի գործակցութեամբ դասաւորում է և օրակարգով ներկայացնում թեմ. ֆողովին: Թեմ. ֆողովը կարող է փոխել խնդիրների օրակարգում բռնած հերթը: Խնդիրները թեմակալ Առաջնորդին կարելի է ներկայացնել թեմ. ֆողովի նստաշրջանի ամբողջ ընթացքում:

32. Յօնմական ժողովը Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի հետ լարաբերութիւն է պահում Յօնմ. Առաջնորդի կամ Տեղապահի միջոցաւ՝ Առաջնորդի բացակալութեան գէպքում։ Առաջնորդը կամ Տեղապահը պարտաւոր են Յօնմ. ժողովի որոշումներն լընթացս մի եօթնեկի ուղարկել Ն. Վեհափառութեան՝ տեղեկացնելով այդ մասին Յօնմական ժողովի Ատենապետին։ Առաջնորդաբանի այս կէտում զանցառու գտնւելու գէպքում Յօնմ. ժողովի Ատենապետն է կատարում նրա պարտքը։

33. Վերաստուգող Յանձնաժողովը բազկանում է երեք անդամից և երկու փոխանդամից և ընտրում է Յօնմ. ժողովից երկու տարի ժամանակով։

34. Վերաստուգող Յանձնաժողովը՝ գումարելով սովորական երկամեալ Յօնմ. ժողովից առնւազն մի ամիս առաջ, քննում և ստուգում է Յօնմ. Խորհրդի գործունեութիւնն ու ընդհանուր հաշիւց և գեկուցագիր ներկայացնում Յօնմական ժողովին (լոդ. 47 ժոդ.)։

## Բ. ԹԵՄԱԿԱԼ ԱՓԵԶԱՄՈՒԹ.

Ա.Ա.Ձ. Տե՛ղԱՊԱՀ. Ա.Ա.Ձ. ՓՈԽԱՆՈՐԴՆԵՐ

35. Հայաստանեալց եկեղեցու կանոնների համաձայն Յօնմակալ Առաջնորդին անորոշ ժամանակով ընտրում է Յօնմ. ժողովը (լոդ. 30) և առաջարկում Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսին ի հաստատութիւն։

Ամենայն Հայոց Կաթուղիկոսն հաստատում է ընտրւածին և միջնորդում իրանի ՆԱՀՆԱՀԻ առաջ ճանաչել նրան Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսի Փոխանորդ Ատրպատականի Յօնմում։

36. Յօնմ. Առաջնորդը մինաձնաբար տնօրինում է թեմի զուտ կրօնական գործերը՝ իւր աստիճանին և պաշտօնին լատկացւած իրաւունքների սահմաններում և հսկում է Հայաստանեալց եկեղեցու կանոնների ու ծէսերի անթերի կատարման և հոգեւորականների ու բոլոր պաշտօնեաների հարազատ պաշտօնավարութեան վրայ։

37. Յօնմ. Առաջնորդը պարտաւոր է այցելել ամբողջ թեմը առնւազն 4 տարին մի անգամ։

Յօնմ. Առաջնորդը առանձին ուշադրութիւն է դարձնում Ժողովրդի, Հոգեւորականութեան, եկե-

զեցիների, վանքելի, եկեղեցական - համայնական, կլթական և բալեգործական ըոլոր հաստատութիւնների վիճակի վրայ՝ անհբաժեշտ դեպքերում հարկաւոր կարեւոր կարգադրութիւններ անելով, որոնց մասին հազորդում է թօնմ. Խորհրդին:

38. Թօնմակալ Առաջնորդն ի պաշտօնէ նախագահում է թօնմ. Ժողովին և թօնմ. Խորհրդին, հաստատում և հրաժարեցնում է Տեղապահին և Գործակալներին, նշանակում և հրաժարեցնում է Փախանուղնելին և Վանահայրերին: Եթէ ունի եպիսկոպոսական աստիճան՝ ձեռնադրում է քահանաներ և այլ եկեղեցական սպասաւորներ Հայաստանեաց եկեղեցու կանոնների համաձայն, իսկ կուսակրօնների ձեռնադրութեան համար չ այցում է ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի թուլաւութիւնը:

Ծն. Ա. Արքատականի թեմում ոչ ոք իրաւունք չունի ձեռնադրութիւն կատարելու առանց թօնմ. Առաջնորդի գրաւոր թուլաւութեան:

Ծն. Բ. Առաջնորդի մասնակցութեամբ կատարեած օրինակատարութիւնների և ծէսերի համար ստացւող աջահամբոյրը կազմում է Առաջնորդի անձնական եկամուտ:

39. Թօնմ. Առաջնորդը հանդիսանում է ներ-

կայացուցիչ ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պարսից կառավարութեան և այլ Պետութեանց Դիւնագիտական մարմինների առաջ:

40. Թօնմ. Առաջնորդը թեմից բացակայելու համար հայցում է ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի թուլաւութիւնը:

20/21

333-9J.

41. Առաջնորդական Տեղապահչի նշանակում է Հոգեորականներից ( Յօդ. 38. ): Առաջնորդական Տեղապահչի ի պաշտօնէ անդամակցում է թօնմական Խորհրդին: Թօնմ. Առաջնորդի բացակայութեան, տկարութեան, այլ և Առաջնորդական Աժոռովի թափուր եղած ժամանակ՝ Տեղապահչի ունի առաջնորդական բոլոր վարչական իրաւունքները:

42. Արքատականի թեմն ունի երկու փոխանորդութիւն՝ Արքատական Արքիոլ և Պարագաղի: Առաջնորդական փոխանորդներին նշանակում է կուսակրօն Հոգեորականներից և պաշտօնից Հրաժարեցնում է թօնմակալ Առաջնորդը ն. Վ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի հաստատութեամբ:

Առաջնորդական Փոխանորդների իրաւունքներն ու պարտականութիւնները որոշում է թօնմ. Ժողովը՝ Առաջնորդի հաստատութեամբ: ( Տես յօդ. 58 Ծնթ. Բ. ):

ՏԵՇԱՐԱՐ

**Գ. ԹՐԵՄԱԿԱՆ ԽՈՐՀԱԿԻՔԴ.**

43. Ապրագատականի թեմ. Խորհուրդը բաղկանում է 8 հոգուց՝ երկու և պաշտօնէ անդամներից, որք են թեմ. Առաջնորդն ու Տեղապահը և վեց Խորհրդականներից, որոնց ընտրում է թեմ. Ֆողովը չորս տարի ժամանակով թաւրիզարնակ հոգեորականներից կամ աշխարհականներից։ Թեմ։ Խորհրդականների կեսը իւրաքանչիւր երկու տարին լրանալուց յետով հերթով գուրս են գալիս։

Առաջնորդի և Տեղապահի բացակայութեան ժամանակ ընտրութեամբ առաջնագոյնը նսխագահում է հերթական նսխաբըն։ (աւագ անդամ)։

Ծն. Ա. Այս հիմնական կանոնադրութեան գործադրութեան առաջին երկու տարուց յետով թեմ, Խորհրդականների կեսը գուրս է գնում վիճակով, իսկ այնուհետև հերթով։

Ծն. Բ. Թեմ. Խորհուրդը թաւրիզի գործակալութեան համար հանդիսանում է նաև Գործակալական Խորհուրդ։

Ծն. Գ. Թեմ. Խորհրդի կազմի և սորա մէջ տեղի ունեցող փոփոխութիւնների մասին թամական Առաջնորդն իւրաքանչիւր անգամ զեկուցանում է ն. Վ. Ամենայն

**Հալոց Կաթուղիկոսին։**

44. Թեմ. Ֆողովն ընտրում է թաւրիզարնակ հոգեորականներից կամ աշխարհականներից նաև 4 թեմ. Փոխ. Խորհրդականներ, որոնք փոխարինում են թեմ. Խորհրդականներին նրանց երկարատև բացակայութեան կամ տկարութեան ժամանակ իրենց ընտրութեան ձախից առաւելութեան կարգով։

45. Եթէ թեմ. Խորհրդական կամ Փոխ Խորհ. է ընտրում թեմ. Ֆողովի անդամը, սա հրաժարւած է համարւում պատգամաւորի պաշտօնից թեմ. Ֆողովի նոյն նստաշրջանից յետով։

46. Բացի հերթական նսխաբընց, որ լինում են սահմանւած օրերը, կարող են հարկ եղած դէպքերում գումարւել թեմ. Խորհրդի արտակարգ նսխաբը թեմ. Առաջնորդի, սրան փոխարինող Տեղապահի, իսկ սրանց բացակայութեան դէպքում՝ Խորհրդի աւագ անդամի հրաւերով։ (Զայների առաւելութեամբ աւագ)։

47. Թեմ. Խորհրդի նսխաբըն նսխագահում է թեմ. Առաջնորդը. նրա անկարողութեան դէպքում՝ Տեղապահը, իսկ երբ անկարող է նսխագահել նաև տ. Տեղապահը, — թեմ. Խորհրդի աւագ անդամը։

48. Թմեմական Խորհուրդը

ա. Հսկում է թեմի բալոր եկեղեցական - համայնական հաստատութիւնների և պաշտօնեաների վարչական գործունէութեան վրայ:

բ. Կազմում է թեմի եկեղեցական - համայնական հաստատութիւնների, կանոնադրութիւնների նախագծերը և առաջարկում է թմեմ, ֆողովին ի հաւանութիւն: (լոգ. 30 ծն. թ.):

գ. Քննում և որոշում է եկեղեցիներ, եկեղեցական - համայնական, կրթական և բարեգործական հաստատութիւններ հիմնելու խնդիրները: Նոր վանքեր հիմնելու խնդիրները քննում և ներկայացնում է Թմեմ, ֆողովին ի հաստատութիւն:

դ. Նոր հիմնելիք կրթական և բարեգործական եկեղեցական - համայնական հաստատութիւնների համար կազմում և ժամանակաւորապէս հաստատում է կանոնադրութիւններ, որպիսիք պարտաւորապէս ներկայացնում է առաջիկայ Թմեմ, ֆողովի հաւանութեան: (լոգ. 30. )

ե. Հրահանգներ է տալիս Թմեմի ստորակարգ եկեղեցական - համայնական հաստատութիւններին և պաշտօնեաներին, ղեկավարւելով այս հիմնական կանոնադրութեամբ՝ ինչպէս և ապագայում Թմեմ, ֆողովի կողմից մշակած և Վեհափառ Կաթողիկոսից հաստատած կանոնադրութիւններով և կարգադրութիւններով:

Շն. Թմեմական Խորհրդի լորինած այս հրահանգների՝ ինչպէս և նախորդ (դ) կետում լիշտած ժամանակաւոր կանոնադրութիւնների օբյեկտները վաւելացւում են Թմեմակալ Առաջնորդի կնքով և ստորագրութեամբ:

զ. Փողովում, պահում և շահեցնում է բոլոր թմեմապատճեններն ու արդիւնքները կառարում է ընդհանուր ծախքեր և առհասարակ վերջնական վճիռներ է կալացնում թեմի ընդհանուր տեսեսական հարցերի մասին՝ ղեկավարւելով նախահաշվով: Թողլաւութիւն է տալիս 50 թուժանից աւելի ծախքեր անել վանքերի և եկեղեցիների վերաբ:

է. Թողլաւութիւն և ժամանակալ մատեաններ է տալիս հանգանակութիւններ անելու Ատրապատականի թեմում, ինչպէս և թեմից գուրսը:

ը. Նշանակում է թմեմական տեսուչ թեմի բոլոր համայնական-կրթական հաստատութիւններին վերահսկելու համար:

թ. Հարկաւոր դեպքում նշանակում է վերաբննիչներ (ըէվիզորներ) եկեղեցական - համայնական հաստատութիւնների գործերն ու հաշիւնները վերաստուգելու համար:

ժ. Հաստատում է պաշտօնում և հրաժարեցնում է զոլոցների հոգաբարձուներին, գործակալական խորհրդականներին (լոգ. 58), երեսփոխան-

ներին, ծխական խորհրդականներին (յօդ. 1), հաստատում և արձակում է ուսուցիչներին հոգաբարձուների առաջարկութեամբ:

Ժա. Մանրամասն ուսումնասիրութիւն պահանջող հարցեր քննելու համար ընտրում է լանձնաժողովներ, որոնք հարցը ուսումնասիրելուց լեռով զեկուցագիր են ներկայացնում Թեմ. Խորհրդին:

Ժբ. Ամեն տարի բաժանում է գործակալական և ծխական խորհուրդներին հարկաւոր նոր ժապավինեալ մատեաններ և յետ ստանում հները:

Ժգ. Որոշում է մանրամասն հրահանգով Թեմական, Գործակալական և Ծխական խորհուրդների կողմից տրող, հաստատող և վաւերացնող վաւերաթղթերի համար վճարելիք թղթատուրքի քանակը և գանձման ձեւը և առաջարկում Թեմ. Ժողովին ի հաստատութիւն:

Ժդ. Տարին մի անգամ զեկուցագիր է մատուցանում Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսին թեմի կացութեան մասին: Երկու տարին մի անգամ Թեմ. Ժողովին մանրամասն հաշիւ է ներկայացնում թեմի եկեղեցական-համայնական գործերի, գոյքերի և հիմնարկութիւնների վիճակի ու կառավարութեան մասին, այլ և բոլոր հաստատութիւնների և պաշտօնեանների գործունէութեան մասին: Թեմ. Խորհրդը պարտաւոր է Թեմ. Ժողովի սովորական նիստից առնւազն մի ամիս

առաջ պատրաստ ունենալ այս ընդհանուր հաշիւ այլև իւր գործունէութեան վերաբերեալ ամեն տեսակ վաւերաթղթեր՝ ըստ պահանջման վերաստուգող լանձնաժողովին լանձնելու համար: (յօդ. 34):

Ժե. Իրեւ նօտարական հաստատութիւն՝ հաստատում է ազգայինների կտակագրերը, մուրհակները, կալւածագրերը, կապալսթղթերը և այլ այգափիսի փաստաթղթեր և վաւերացնում է իրեն գիմողների ստորագրութիւնը:

Ժզ. Իրեւ Առաջին Ատեան՝ քննում է պսակալութեան վերաբերեալ գործերն ու առաջարկում է Ն. Վ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսին ի տնօրինութիւն: Քննում և վճռում է թեմի բոլոր եկեղեցական-ազգային հաստատութիւնների և պաշտօնեանների կողմից և սրանց գէմ ստացւած բոլորները և գանգատանները, այլև հոգեորականների և ժողովրդի մէջ ծագած տարածալանութիւնները:

Ժէ. Իրեւ Երկրորդ Ատեան՝ քննում և վճռում է այն բոլոր վէճերը, խնդիրներն ու գանգատները՝ (ամուսնական, ժառանգական և այլն) որոնք սկսել են գործակալական խորհրդում. այլև վէճռում է խնամակալութեան վերաբերեալ բոլոր հարցերը:

49. Թեմական սնդուկի անմիջական հսկողութիւնն ու բանալին լանձնուում է թեմական խորհր-

դե գանձաստահին, որին թեմ. Խորհուրդն ընտրում է իւր միջից չորս առաջի ժամանակով փոխադարձ երաշխաւորութեամբ :

Ծն. Թեմ. Խորհուրդը պարտաւոր է իւրաքանչիւր ամիս ստուգել թեմ. սնդուկը :

50 Թեմազատկան գումարներից մինչև 250 թուման պահւում է սնդուկում, իսկ աւելի գումարները ապահով գրաւականով շահեցնում են թեմ. Խորհրդի անունով՝ նոյն խորհրդի օրինաւոր վճռի համաձայն և բոլոր անդամների ընդհանուր պատասխանատւութեամբ :

51 Թեմ. Խորհուրդը պարտաւոր է ունենալ.

ա. Ամբողջ թեմի բոլոր եկեղեցական - համայնական հիմնարկութիւնների — այն է շեն ու աւերակ վանքերն և եկեղեցիների, գպրոցների, գրադարանների և առհասարակ բոլոր կրթական և բարեգործական հաստատութիւնների և գրանց պատկանող կամ լատկացւած անշարժ գոյքերի տպագրած մանրամասն ցուցակը :

բ. Ամբողջ թեմի հայ ազգաբնակութեան աճման, մահացութեան և ամուսնութիւնների վիճակադրական աղիւսակը՝ գործակալական խորհուրդների չափաբերականներից քաղլած տեղեկութիւնների համաձայն և Գ. Ժապաւինեալ մատեաններ թեմի բոլոր եկեղեցական - համայնական հիմնար-

կութիւններին աշատկանող կամ լատկացւած շարժական գոյքերի, այն է դրամագլուխնելի, անօթեղէնի, զարդերի, գրքերի, կահ - կարասիքի և այլն՝ մանրամասն ցուցակագրութեամբ :

52. Թեմ. Սուածնորդն ու Խորհուրդը ունեն մի ընդհանուր գիւտանատուն, որի համար թեմ. Խորհրդը գրագիրներ և քարտուղար է վարձում թեմ. Սուածնորդի հաստատութեամբ։ Քարտուղարը համաբեր է գրագիրնելի անմիջական իշխանաւոր :

53. Գիւտանատան քարտուղարը պարտաւոր է պահել ժամադրինեալ մատեաններ թեմ. Խորհրդի արձանագրութիւնների և գործավարութեան բոլոր բաժինների համար և հակել զիւտանատան բոլոր թղթերի անկորութ և կոնոնաւոր պահպանութեան վերալ :

54. Թեմ. Խորհրդի բոլոր պաշտօնական թղթերը, այն է՝ գրագրութիւնները զանազան անձերի և հաստատութիւնների հետ, արձակած վճիռները, խնդրատուններին տւած վկալագրերը և խորհրդից տրւած որոշումների, վճիռների պատճենները և այլն, պէտք է կրեն թեմ. Սուածնորդի կամ Տեղապահի և գալտուղարի ստորագրութիւններ և դրամագլուխ լինին Սուածնորդական կնոպ :

### III ԳԼՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ

55. Սարպատականի թեմն ունի 14 գործակալութիւն, որոնք են. — Մակու, Սալմաստ, Խոյ, Ռոբմի, Մարաղա, Մուժամբար, Արդարիլ, Մէշափար, Տզմար, Մնջուան, Քէլվան, Ջաւրիզ, Սօռչքուլաղ, Սուլիլուզ:

56. Պարբերաբար ամէն չորս տարին մի անդամ իւրաքանչիւր գործակալութեան բոլոր եկեղեցիների ծխական ժողովները ներկայացուցիչներ են ընտրում գործակալութեան ժողով գումարելու համար: Իւրաքանչիւր ծխական համայնք ուղարկում է առնւազն մի ներկայացուցիչ, իսկ բազմածուխ եկեղեցիները իրենց համայնքի իւրաքանչիւր 25 տան համար մի մի ներկայացուցիչ են ընտրում:

Ծն. Իւրաքանչիւր ներկայացուցիչ պէտք է ներկայանալ գործակալական ժողովում իւր լիազօրութիւնը հաստատող վկայականով, որը պէտք է ստորագրւած լինի ծխական ժողովի նախագահից և վագերացրած ծխական ժողովի կնքով:

57. Ներկայացուցիչներին գործակալութեան ժողովի է հրաւիրում և ժողովին նախագահում է գործակալ քահանան, իսկ սրա բացակայութեան գէպէւմ գործակալական խորհրդի նսխանգամը:

58. Իւրաքանչիւր գործակալութիւն ունի իր խորհուրդը, որը բաղկանում է գործակալ քահանայից և գործակալական երեք խորհրդականներից: Գործակալ քահանային նշանակում է թեմի Առաջնորդը, իսկ գործակալական խորհրդականներին ընտրում է աշխարհականներից կամ հոգևորականներից գործակալութեան ժողովը 4 տարի ժամանակով և առաջարկում է Յանձական Խորհրդին հաստատութեան. (լոդ. 43 ժ.): Գործակալական խորհրդականներից մէկին գործակալական խորհուրդը ընտրում է նախանդամ 4 տարի ժամանակով:

Ծն. Ա. Գործակալութեան ժողովն ընտրում է նաև 2 փոխ-խորհրդականներ, որոնք փոխարինում են գործակալութեան խորհրդականներին, սրանց երկարատև բացակալութեան կամ տկարութեան ժամանակ իրենց ընտրութեան ձայնից առաւելութեան կարգով:

Ծն. Բ. Փոխանորդանիստ կեղոնավայրում Առաջն. Փոխանորդը վարում է նաև գործակալի պաշտօն:

Ծն. Գ. Սրգաբիլում, Նազարէյում, Միանդարում և Սօռւըռուլազում գործակալական խորհուրդը հանդիսանում է նաև Ծխական Խորհուրդ: Ալ տեղերում գործակալական խորհուրդն հանդիսա-

նում է նաև Ծխական Խորհուրդ գործակալութեան կեղրոնի աւագ եկեղեցու համար, ուստի և ծխական Խորհրդի իրաւասութեան վերաբերեալ հարցեր վճռելիս՝ պարտաւոր է իւր նիստերին հրաւիրել նաև երեսփոխին:

59. Բացի հերթական նիստերից, որ լինում են Ուեմական ծողովից սահմանաւած օրերը, կարող են լինել հարկ եղած դէպքերում Գործակալական Խորհրդի նաև արականք նիստեր՝ գործակալի կամ Գործակալական Խորհրդի նախագահի հրաւերով:

60. Գործակալական Խորհրդի նիստերին նախագահում է գործակալը, իսկ սրա բացակալութեան դէպքում՝ նախանդամը:

61. Գործակալական Խորհուրդը մերձաւոր հրակողութիւն ունի.

ա. Գործակալութեան բոլոր եկեղեցական-համայնական հաստատութիւնների և պաշտօնեանների վարչական գործունէութեան վերայ:

բ. Պարտաւոր է գործակալութեան բոլոր եկեղեցական-համայնական հաստատութիւնների վիճակի և կառավարութեան, ինչպէս նաև պաշտօնեանների վարչական գործունէութեան մասին տարին մի անգամ տեղեկագիր ուղարկել Ուեմական Խորհրդին:

գ. Փողովում է և երեք ամիսը մի անգամ օրի-

նաւոր ցուցակագրութեամբ ուղարկում է թանը. Խորհրդին գործակալութեան բոլոր թեմապատկան հասոյթներն ու արդիւնքները:

դ. Ամեն տարւայ սկզբին գործակալութեան բոլոր ծխական խորհրդներին բաժանում է թանմական Խորհրդից ստացւած նոր ժապաւիներալ մատեաններ՝ քահանաներին և երեսփոխներին լանձնելու համար և հները վերցնելով՝ ուղարկում է Ուեմական Խորհրդին՝ պահելով պատճենները:

ե. Հաստատում և վաւերացնում է ազգայինների փաստաթղթերը և ստորագրութիւնները և տակիս է մետրիքական քաղւածքներ :

զ. Հաստատում է խնամակալներ մեռած ազգայիններից յետոյ մնացած գույքերի և որբերի վերայ, հրաժարեցնում է եղած խնամակալներին, թոյլ է տալիս խնամակալներին ծախքեր անել որբերի և գույքերի վերայ մինչև 50 թուման, աւելի մեծ ծախքերի, ինչպէս նաև որբապատկան գույքերը զրաւ դնելու և ծախելու համար՝ դիմելով Ուեմական Խորհրդին:

է. Իրեւ Առաջին Ատեան՝ քննում է գործակալութեան մէջ ապրող հայերի ամուսնական խնդիրները, չհասութեան կասկածելի դէպքերում դիմելով Թան. Առաջնորդին (լոգ. 19), և իրեն գիմողների բոլոր կարածական, ժառանգական և այլ վէճերն ու խնդիրներն. (լոգ. 48. մէ.):

62. Գործակալական Խորհուրդը պարտաւոր է ունենալ ժապաւինեալ մատեաններ՝ գործակալական բոլոր եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների, դրանց պատկանող կամ յատկացւած անշարժ և չարժական գոյքերի՝ այլ և բոլոր պաշտօնեանների մանրամասն ցուցակագրութեամբ և ծխական խորհուրդների չափաբերական մատեանների պատճենները:

63. Գործակալական Խորհուրդն ունի մի գործավար, որ պարտաւոր է պահել Խորհական խորհրդի կնքեվ վաւերացրած ժապաւինեալ մատեաններ գործավարութեան բոլոր բաժինների համար, կանոնաւոր և անկորուստ պահպանել գործակալական խորհրդի բոլոր թղթերը և կազմել նրա նիստերի արձանագրութիւնները:

64. Գործակալական Խորհուրդն իւր միջից փոխադարձ երաշխաւորութեամբ ընտրում է մի գանձապահ երկու տարի ժամանակով, որին յանձնում է իւր դրամարկղի անմիջական հսկողութիւնն ու բանալին:

Ծն. Գործակալական Խորհուրդը պարտաւոր է ամեն ամիս կատարել իւր դրամարկղի ստուգութիւնը:

65. Գործակալական Խորհրդի բոլոր պաշտօնա-

կան թղթերը պէտք է կրեն նախադաշի և գործավարի ստորագրութիւններ և դրոշմւած լինին Գործակալական Խորհրդի կնքով, որը ստանում է Թեմական Խորհրդից :



## Դ. ԾԽԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔ (Եկեղեցի)

66. Իւրաքանչիւր ծխական եկեղեցին ունի իւր ծխական Խորհուրդը, որը կազմւում է նոյն եկեղեցու աւագ քահանալից, երեսփոխից և 3 ծխական խորհրդականներից, որոնց ընտրում է ծխական ժողովը չորս տարի ժամանակով իւր գրադէտ անդամներից և առաջարկում թեմական Խորհրդին ի հաստատութիւն. (լօդ. 48 ժ.):

67. Բացի հերթական նիստերից, որ լինում են թեմական ժողովից որոշւած օբերը, կարող են լինել ծխական Խորհրդի նաև արտակարգ նիստեր աւագ քահանալի հրաւերով:

### 68. Ծխական Խորհուրդը

ա. Կառավարում է ծխական համայնքի բոլոր եկեղեցական-համայնական գործերը և հաստատութիւնները, միևնույն ժամանակ հանդիսանալով նաև հոգաբարձութիւն՝ ծխական դպրոցների համար:

բ. Հսկում է երեւփոխի և ծխական համայնքի բոլոր պաշտօնեանների գործողութեանց վերալ:

գ. Վաւերացնում է ծխականների ստորագրութիւնները:

դ. Ունի նաև այն բոլոր իրաւունքներն ու պարտականութիւնները, որ Հայութանական եկեղեցու

ծխական կանոնադրութիւնը սահմանել է հաշւետեսների համար: (Տես ծխ. կանոնադրութիւն 20, 73, 74, 82, 87, 89):

ե. Գճուռամ է իրեն գիմող ծխականների վէճերը:

զ. Ընտրում է ինամակալներ՝ մեռած ծխականներից լետոյ մնացած կայքերի և որբերի վրա հսկելու և առաջարկում է ի հաստատութիւն Գործակալական Խորհրդին:

69. Իրեն վերապահելով ընդհանուր վերահսկողութեան և հաշւառութեան ինաւունք, ծխական ժողովը կարող է ծխական Խորհրդին լանձնել իւր իրաւունքները պատկանող (Տես. ծխ. կան. լօդ. 19.) այս կամ այն գործի տնօրինութիւնը:

70. Ծխական Խորհրդը պարտաւոր է ունենալ ժապաւինեալ մատեաններ ծխի մէջ գտնւած բոլոր եկեղեցական-համայնական հիմնարկութիւնների, գրանց պատկանող կամ լատկացւած անշարժ և շաժական գոյքերի, այլ և բոլոր պաշտօնեանների մանրամասն ցուցակագրութեամբ և չափաբերական մատեաններ՝ ծխի բոլոր հայ ընտանիքներում տեղի ունեցած ծնունդների, պատկների և մահացութեան արձանագրութեամբ:

71. Երեսփոխը ծխական խորհրդի գանձապահն է և պարտաւոր է գանձել, պահել և շահեցնել

ծիսկան հասովթներն ու արդիւնքները, կատարել եկեղեցւ համար անհրաժեշտ ծախքեր.— մինչև 15 թուժան ինքնագլուխ, աւելի ծախքերի համար՝ մինչև 50 թուժանի՝ ստանալով ծիսկան ժողովի համաձյութիւնը և Գործակալական Խորհրդի գրաւոր թույլտութիւնը, աւելի մեծ ծախքերի համար — Թամական Խորհրդի թույլտութիւնը։ Հաւաքել և ամեն լրեք ամխոց մի անգամ ուղարկել Գործակալական Խորհրդին թեմապատկան հասովթներն ու արդիւնքները։

72. Երեսփոխը պարտաւոր է ամեայն տարի մի անգամ ծիսկան ժողովի տարեկան սովորական նիստին, որի ժամանակը որոշում է Թամական ժողովը, մանրամասն հաշիւ նելկալացներ որպիսին հաստատում է ծիսկան ժողովը՝ ծիսկան Խորհրդի գեկուցազերը լսելուց լեռու։

73. Բայի այս հիմնական կանոնադրութեան յօդւածնելից՝ ծիսկան համայնքի համար պարտաւորապէս գործազրելի է ընդհանուր Հ. Եկեղեցու ծիսկան Կանոնադրութիւնը (հաստատած 1902 թիւ. Մարտ ամսին.) այն փոփոխութիւններով, որ կըսահմանի է Ստրապատականի Թամական ժողովը, ի նկատի ունենալով Թամի եկեղեցական-համայնական կազմակերպութիւնը, տերական համայնքների պէտքերը և գեկազարւելով Հայոց Կանոնական ի-

րաւունքով և այս հիմնական կանոնադրութեամբ և առաջարկելով Ն. Վ. Ամնայն Հայոց ՊԵՏՐՈՎԻԿԱՂԻԿԱՅԱՍԻ հաստատութեան։

Զկանոնադրութիւնս գայս հաստատեալն ի Նորին Ս. Օծութենէ ՚ի Վեհափառ Հայրապետէ Ամենայն Հայոց, ի Տ. Տ. ՄԿՐՏՉԵԼ Շ. ճշտութեամբ համեմատեալ և իսկութեամբ արտադրեալ է ի ստորագրեալ ընազրէ Կանոնադրութեան սբբագրող Յանձնաժողովոյն Ս. Էջմիածնի։

Դիւանագետ Վեհափառ Հայրապետի  
Ամենայն Հայոց՝

Կորիւն Վարդապետ։

## ԾԽԸԿԱՆ ԿԸՆՈՒՆԸԴՄԲԲԻԹՅԻՒՆ

1. Իւրաքանչիւր քաղաքի կամ գիւղի ամեն մի հայ եկեղեցու կամ աղօթատան բոլոր ծխականները նոյն եկեղեցու բոլոր միաբան հոգեոր պաշտօնեաների հետ միասին կազմում են մի ծխական համայնք :

2. Որ և է հայ եկեղեցու կամ աղօթատան ծխական են համարւում այն անձինք, որոնք առ նւազն վեց ամիս իրեւ ծխական արձանագրւած են նոյն եկեղեցու կամ աղօթատան միաբան քահանաներից մէկի մատեանում (տես յօդ. 88) :

3. Ծխականների պարտականութիւնն է իրենց եկեղեցու ծխական ժողովի խնդրած ծառայութիւններին լանձնառու և եկեղեցական պէտքերի պահանջած ծախքերին մասնակից լինել :

4. Մի անձն միւնոյն քաղաքում կամ գիւղում կարող է միայն մի եկեղեցու կամ աղօթատան ծխական լինել: Խսկ տարբեր քաղաքներում կամ գիւղերում՝ կարող է միաժամանակ մի քանի եկեղեցիների ծխական լինել, ենթարկելով այդ եկեղեցիներից իւրաքանչիւրի ծխական ժողովից սահմանւած տուրքերին և բոլոր ծխական պարտականութիւններին :

5. Ծխական բոլոր պաշտօնեաները՝ թէ հոգեո-

րական, և թէ աշխարհական, թէ պատւաւոր և թէ վարձատրելի, ընտրւում են ծխական ժողովից:

6. Բոլոր պաշտօնեաները վերընտրելի են՝ բացի յատկապէս լիշւածներից :

7. Իւրաքանչիւր եկեղեցին կամ աղօթատուն կարող է ունենալ մէկ կամ մէկից աւելի քահանայ: Իւրաքանչիւր քահանայի ենթատրւում է ժողովուրդ առ նւազն հազար (1000) հոգի (շունչ՝ արական և էգական, մեծ և փոքր): Բացառիկ գէպքերում այս թւից (1000 հոգուց) պակաս հոգու համար էլ կարելի է ընտրել առանձին քահանայ՝ սակայն միմիայն այն առանձնացած տեղերի համար, ուր չկայ ոչ մի քահանայ և որի համայնքը երաշխաւորում է լիապէս ապահովել քահանայի տնտեսականը :

8. Իւրաքանչիւր եկեղեցու կամ աղօթատան բոլոր իրաւասու ծխականները նոյն եկեղեցու կամ աղօթատան միաբան հոգեոր պաշտօնեաների հետ միասին կազմում են ծխական ժողով:

9. Նորեկները, այսինքն մի ալ ծխական համայնքից տեղափոխւողները՝ նոր եկեղեցու կամ աղօթատան ծխական համարւել կարող են սոյն եկեղեցու ծխական գրւելուց վեց ամիս լիտոյ (տես յօդ. 2):

10. Ժամաւորները, որոնք ծխական չեն՝ ծխական ժողովին մասնակցելու իրաւունք չունին:

11. Ծխական իրաւասու են, այսինքն՝ ծխական ժողովներին մասնակցելու և պաշտօններ ստանձնելու իրաւունք ունին 21 տարին լրացրած բոլոր ծխականները՝ բացի նրանցից, որոնք հետեւեալ չոգւածի (յօդ. 12) հիման վրայ զրկւած են այդ իրաւունքից: Տարիքը պէտք է հաշւել ոչ ամիսներով, այլ տարեթւերով:

12. Ծխական ժողովին մասնակցելու և ընտըւելու իրաւունքից զրկւում են այն ծխական իրաւասուները՝

ա) Որոնք Հոգեւոր իշխանութեան օրինական դատաստանով զրկւած են այդ իրաւունքներից և կամ դտնւում են ապաշխրութեան տակ:

բ) Որոնք պետական օրէնքների զօրութեամբ և դատաստանով քրէական լանցանքների համար բոլորովին կամ մասսամբ զրկւած են իրաւունքներից:

գ) Որոնք դատաստանի տակ են այնպիսի լանցանքների համար, որպիսիների հետեւանքը լինում է բոլորովին կամ մասսամբ իրաւունքներից դրէւելը, — մինչեւ դատաստանով արդարանալը:

դ) Որոնք սովորով ընդունւած կամ ծխական ժողովից սահմանւած եկեղեցական տուրքերը չեն վճարել (բացի չունեռնե-

րից, որոնք՝ ըստ սովորովի կամ ժողովի որոշմամբ՝ ազատ են տուրք վճարելուց) և որոնց վրայ եկեղեցական ապառիկներ կան: (Ապառիկ է համարւում իւր ժամանակին չփառարւած պարտքը):

13. Ծխական ժողովը սկսում է պատշաճաւոր աղօթքով, որ ասում է ներկալ հոգեորականներից աւագագոյնը. իւկ եթէ հոգեորական չկալ՝ ժողովի նախագահը:

14. Ծխական ժողովի նիստերը գոնքաց են լինում. բացի արտակարգ դէպէերից, ելլ ժողովի որոշմամբ նիստը գոնքակ է տեղի ունենում:

15. Բացի յատկապէս նսխատեսւած դէպէերից ծիսկան ժողովների բոլոր վճիռները և ընտրութիւնները կատարւում են ձայնելի հասարակ մեծամասնութեամբ: Ձայնելի հաւասարութեան դէպէքում զելակւում է այն կողմը, որին իւր ձայնը տալիս է ժողովի նախագահը:

16. Միմիալն կանոնադր կերպով կայացած՝ ծխական ժողովում սահմանւած և ստորագրւած վճիռները և համախօսականները համարւում են վաւերական և օրինական զօրութիւն ունեցող: Ծխական ժողովից դուրս կազմւած որ և է համախօսական կամ բազմաստորագիր թուրք, նոյն իսկ պաշտօնապէս վաւերացւած ստորագրութիւններով, ոչ մի օրինական ոլժ չունի.

17. Եթէ իրաւասու ծխականներից մէկը ժողովի իրաւասութեանը պատկանող որ և է գործի վերաբերմամբ խարդախութիւն, կեղծիք, խարեբայութիւն է արել և ժողովի կողմից այդ ապացուցւել է՝ ժողովի յատուկ վճռով այդպիսին կարող է զրկւել նոյն գործին առ ժամանակ կամ ընդ միշտ որ և է կերպով մասնակցելու իրաւունքից :

18. Ծխական ժողովի իրաւունքն է ձայների մեծամասնութեամբ փակել ընդհատել կամ լեռաձգել նիստի շարունակութիւնը նոյն կամ ուրիշ օրուայ :

19. Ծխական ժողովի իրաւասութեանը պատկանում են հետեւեալ գործերը .

ա) Քահանայացուների և եկեղեցական սպասաւորների ընտրութիւնը, ծխաբաժանութիւնը, քարոզիչներ հրաւիրելը :

բ) Ծխական համայնքի տնտեսականի ընդհանուր կառավարութիւնը և տնօրինութիւնը. Երեսփոխ, ծխական խորհրդականներ ընտրելը և պաշտօնից հեռացնելը. նրանց գործունեութեան քննութիւնը, վերահսկողութիւնը և հաշւաւութիւնը. յանցաւորութեան գէպրում՝ նրանց քրէական և քաղաքացիական դատի ենթարկելը յատուկ հաւատարմատարի ձեռքով :

շ) Եկեղեցու կամ ազօթատան բարեգար-

դութեան մասին հոգացողութիւն (անօթների մատակարարութիւն, երգեցիկ խումբ կազմակերպել և պահել, և այլն) :

դ) Քահանաների և եկեղեցական այլ պաշտօնեաների տնտեսուկան ապահովութեան խնդիրը :

ե) Ծխական տաւրքեր և պարտականութիւններ սահմանելը :

զ) Ծխական համայնքի ընտանիքների երկու սեռի մանուկնեզի կրօնական դաստիարակման վրայ հոգացողութիւն։ Եկեղեցում կամ նրա գաւթռում սովորեցնել կարդալ զբել, ազօթքներ, փոխասացութիւն, ժամերգութիւն, սուրբ Գրքի և մասնաւորապէս ո. Աւետարանի ընթերցանութիւննեկեղեցական պաշտօնեաների ձեռքով կամ նրանց հսկողութեան տակ և ղեկավարութեամբ :

է) Ծխական համայնքի ըարեգործական գործունէութեան ընդհանուր տնօրէնութիւնը. նոյն եկեղեցուն կամ ազօթատան պատկանող աստւածահաճոյ հաստառութիւնների պահպանութիւնը, վերահսկողութիւնը և դրանց կառավարող յատուկ հոգաբարձուների ընտրութիւնը:

ը) Հարկ եղած գէպքում ծխական համայն-

Քի շահերը պաշտպանելը սկստական դատարաններում, քրէական և քաղաքացիական դատեր վարելով երեսփոխի կամ մի լատուկ հաւատարմատարի ձեռքով :

թ) Վկայութիւն և կարծիք լայտնել եկեղեցական զանազան հաստատութիւններում քննւող և վճռւող այն գործերի և խնդիրների մասին, որոնք վերաբերում են ծխական համայնքին կամ նոյն համայնքի աշխարհական և հոգեորական անդամներին : ժ Հարկաւոր գէպիքերում հոգաբարձական լանձնաժողովներ ընտրելը՝ շինութիւններ նորոգութիւններ և ծխական ժողովից լանձնարարւած այլ գործողութիւններ կատարելու համար :

ժա) Ծխական համայնքի բոլոր գործերի վերաբերմամբ անհրաժեշտ և հարկաւոր կարգադրութիւններ սահմանելը :

ժը) Պատգամամատորներ, ներեալացուցիչներ և նրանց փոխանորդներ ընտրելը՝ ծխական համայնքի կողմից ուրիշ պատգամատորական օր. թեմական ) ժողովների և այլ զանազան եկեղեցական գործառնութեանց մասնակցելու համար :

20. Ծխական ժողով հրաւիրելու իրաւունք ունին :

ա) Հոգեոր իշխանութիւնը,  
բ) Նոյն եկեղեցու իւրաքանչիւր քահանան,  
գ) Երեսփոխը,  
դ) Ծխական խորհրդականները և  
ե) Մի քահանայ ունեցող ծխական համայնքում՝ իրաւասու ծխականներից առ նւազն տասն և երկու (12) հոգի միասին, իսկ մէկից աւելի քահանայ ունեցող ծխական համայնքում՝ իրաւասուներից առ նւազն քսան և չորս հոգի (24) միասին :

21. Ժողովի հրաւելը կատարւում է գրաւոր հրաւիրաթղթով . պահանջում է նաև բանաւոր ծանուցումն եկեղեցում :

— Հրաւիրաթուղթը ուղարկում է եկեղեցու կամ ազօթատան բոլոր իրաւասուներին, իսկ մի մի օրինակ կախ է տրւում (առ նւազն մի շաբաթ) եկեղեցու պատի վրայ, մուտքի գրա՞ն մօտ՝ ներսը և դուրս՝ լատուկ տեղում : Հրաւիրաթղթում արձանագրւած պիտի լինի ժողովում խորհրդածւելիք և վճռւելիք հարցերի օրակարգը :

— Եկեղեցու կամ ազօթատան քահանաները պարտաւոր են եկեղեցում բերանացի ծանուցումներ անել գումարւելիք ժողովի մասին գոնէ երեք անգամ :

22. Սովորական ծխական ժողովատեղին է եկեղեցին կամ եկեղեցապատկան շէնքերը : Արտա-

կարգ զեպքերում ժողովը կարող է գումարւել և մասնաւոր շենքերում։ Ժողովի ժամանակ եկեղեցում սեղանի վարագուրը քաշւած է լինում։

23. Ժողով եկող իւրաքանչիւր ծխական իրաւասու ստորագրում է ի ո անունը և ազգանունը յատակ թերթի դրայ։

24. Ծխական ժողովը առաջին անգամ կանոնաւոր է համարում և նիստը բացւում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասուների թիւը նոյն եկեղեցու կամ ազօթատան իրաւասուների (տարեցուցակում արձանագրւածների, տես յօդ. 89) ընդհանուր թւի կիւից տւելի է կամ եթէ ներկայ եղող իրաւասուների թիւը հասնում է առ նւազն հարիւրի (100)։

25. Եթէ առաջին անգամ ժողովը չկայանայ՝ գումարւած ծխական իրաւասուների սակաւութեան պատճառով (յօդ. 24), կրկն անգամ իրաւասուները ժողովի են հրաւիրում 21 յօդւածում ցոյց տւած եղանակով, նշանակելով հրաւիրաթղթում, որ այս երկրորդ ժողովի հրաւիրն է։

26. Երկրորդ ժողովը (յօդ. 25) կանոնաւոր է համարում և նիստը բացւում է, եթէ ներկայ եղող ծխական իրաւասուների թիւը նոյն եկեղեցու կամ ազօթատան իրաւասուների (տարեցուցակում արձանագրւածների, տես յօդ. 89) ընդհանուր թւի մի հինգերորդ (1<sup>15</sup>) մասից պակաս

չէ, կամ եթէ ներկայ եղող իրաւասուների թիւը հասնում է առ նւազն լիսունի (50)։

27. Եթէ երկրորդ անգամ հրաւիրւած ժողովը ներկայ եղող իրաւասուների թւի սակաւութեան պատճառով չկայանայ, Հոգեւոր իշխանութեան պարտականութիւնն է, եթէ միայն կան կարեւոր և անցետաձգելի հարցեր, իւր նախաձեռնութեամբ և իւր ձեռքում եղած բոլոր միշոցներով ծխական իրաւասուներին ժողովի գումարել, իսկ անյաջողութեան զեպքում Հոգեւոր իշխանութիւնը դիմում է թեմական իշխանութեան, ինդելով տշնօրէնութիւն։

28. Եթէ ժողովականները (ժողովում ներկայ իրաւասուները) ժողովը գեռ պաշտօնապէս չփակւած հեռանան և ներկայ մնացողների թիւը նիստի բացման ժամանակ բոլոր ներկայ եղող իրաւասուների թւի կիսից պակաս լինի, ժողովն ընդ ըստ ինքեան փակւած է համարւում։

29. Քաղաքներում ծխական ժողովի նիստը բաց է անում նոյն ծխական համալիքի քահանան, քահանաւի բացակայութեան զեպքում երեսփոխը, իսկ երեսփոխի բացակայութեան զեպքում՝ ներկայ գրագէտ իրաւասուներից տարիքով աւագը։ Ժողով բացողն 23-րդ յօդւածում լիշտած թերթի ստորագրութիւնները բարձրածայն համեմատում է ծշխական իրաւասուների տարեցուցակի (տես յօդ.

89, 90.) Հետ և ստուգում ներկայ գտնող ծը-խականների իրաւունքը ժողովին մասնակցելու (այս վերստուգւած թերթը է ետոյ կցւում է ժողովի ար-ձանագրութեանը) ապա ձեռնարկում է նախագա-հի ընտրութեանը և նախադահի ընտրութիւնից լետոյ համարւում է լոկ ժողովական։ Գլուզերում՝ եթէ ժողովին ներկայ է նոյն շրջանի Առաջնորդա-կան Փոխանորդը կամ գործակալ քահանան՝ սրանք են բաց անում նիստը և կարող են ի պաշտօնէ նախագահէլ ժողովին։

30. Ծխական ժողովի քարտուղարին, քւետու-փերի վրայ հսկողներին, քւեներ համարազներին, անդրագէտների համար թերթիկների վրայ գրող-ներին և նման պաշտօնեաններին ընտրում է ծը-խական ժողովը։

31. Նախագահը հսկում է ընդհանուր կարգա-պահութեանը և ծխական ժողովի բոլոր գործողու-թիւնների կանոնաւորութեան և վայելչութեան սահմաններից չչելու և լու։

32. Նախագահն իւաւունք ունի ծխական ժո-ղովին ներկայ եղող կողմնակի, ոչ ժողովական (յօդ. 14) անձերին, որ և է անկարգութեան դէպքում, անմիջապէս հեռացնել ժողովից։

33. Երկու անգամ պաշտօնապէս կարգի հրա-ւիրելուց լետոյ՝ նախագահն իրաւունք ունի ան-կարգապահ ժողովականը զրկել խօսելու իրաւուն-

դից, իսկ անկարգութեան յամառ շարունակութեան դէպքում, նոյն իսկ հրաւիրել ժողովականին թող-նել ժաղավը և հեռանալ. իսկ ընդդիմագրութեան դէպքում՝ դիմել ոստիկանութեանը։

34. Ծալրակեղ դէպքերում՝ երեք անգամ ամ-բողջ ծխական ժողովը կարգի հրաւիրելուց լետոյ, երբ այլ ևս անհնարին կինի շարունակել նիստը խոօվութիւնների պատճառով, նախագահն իրա-ւունք ունի նիստը փակւած լոյստարարել։

35. Եթէ երկու միմեանց անսիջապէս լաջորդող պաշտօնապէս բացւած կանոնաւոր ժողովներ խշ-ուովութիւնների պատճառով չեն կայանում, այս դէպքում Հոգեսր իշխանութեան իրաւունքն է՝ կարգել նշանակովի նախագահ նոյն ծխական հա-մայնքին պատկանող կամ դրսի հոգեսրականներից և աշխարհականներից։

36. Ծխական ժողովում խորհրդածութեան և ձախատութեան առարկայ են լինում միմիայն օ-բակարգում (տես յօդ. 21) նշանակւած հարցելը բացի յատկապէս լիշւած խնդիրներից (տես յօդ. 14, 38, 40, 91, և այլն)։

37. Խրաբանչիւր ժողովական ունի միայն մի ձախ կամ մի քուէ։

38. Որ և է պատճառով ժողով չեկող ծխական իրաւասուն իւր ձախ։ կամ քուէն ուրիշին յանձ-նելու իրաւունք չունի. բաց իրաւունք ունի իւր

գլաւոր կարծիքն ուզարկել ժաղովին, որ կարող է կարդացւել քուէարկութիւնից առաջ, եթէ ժաղովն այդ կամենալ: Բայց այս գլաւոր կարծիքը հաշուի չէ առնւում որպէս ձախն քւէարկութեան ժամանակ, այլ կցւում է ժաղովի արձանագրութեանը:

39. Օլսկալ զււմ նշանակւած խնդիրներում անձնական շահ ունեցող ժողովականը չէ կարող ընտրւել ծխական ժողովի նախագահ (յօդ. 40):

40. Այն ժողովականները, որոնք որ և է անձնական շահ ունին խորհրդածւելիք և վճռւելիք խնդրում, կամ եթէ այդ խնդիրն իրանց է վերաբերում՝ այդ խնդիրի խորհրդածութեան և վճռման ժամանակ ժողովից հեռանում են: Ժողովականի կամ նախագահի (յօդ. 39) շահակից լինելը սրոշում է ժողովը: Այդպիսիներից ժողովը կարող է հարցնել նրանց կարծիքը և ունեցած տեղեկութիւնները:

41. Երբ նախագահը որ և է պատճառով դեռ ժողովը չփակւած ստիպւած է թողնել նախագահութիւնը, պէտք է ընտրել նոր նախագահ:

42. Ի պաշտօնէ և նշանակովի նախագահողները՝ եթէ նոյն ծխական համայնքի իրաւասու չեն՝ ձայնատւութեան կամ քւէարկութեան չեն մասնակցում:

43. Ծխական ժողովի որոշմամբ՝ ձայնատւութիւնը կամ քւէարկութիւնը (թէ վճռւելիք հար-

ցերի և թէ ընտրութիւնների) կարող է լինել թերթիկներով, քւէներով և կամ ձեռք բարձրացնելով:

44. Զայնատւութիւնը գաղտնի է լինում, եթէ ժողովականներից առ նւազն հինգ հոգի քւէարկութիւնից առաջ այդ պահանջեն:

45. Թեկնածուներ որոշելիս նախագահը բաժանում է բոլոր ժողովականներին իւր կ'րոլ կամ ստրաբրութեամբ նշնու մի մի թերթիք, որի վրայ ամեն մի ժողովական գրում է իւրաքանչիւր ընտրելի պաշտօնաւայի համար երկու թեկնածուից ոչ աւելի: Այդ թերթիկները հաւաքւում, հերթով կարդացւում են և նշանակւում է իւրաքանչիւր թեկնածուի ստացած ձայների թիւը: Այնուհետև թեկնածուները քւէարկութեան ստացած ձայների առաւելութեան կարգով:

46. Քւէսրկւել կարող են նուե ժողովից բացակայող անձինք, եթէ առաջ սրկունքն եղալն ստորած են, որ նրանք չեն մերժի իրենց ընտրութիւնը:

Ինքը թեկնածուն չէ կարող մասնակցել իւր քւէարկութեանը:

48. Երբ մի պաշտօնի համար մի քանի անձինք պիտի ընտրւին (հաշւետեսներ, պատգամաւորներ և այլն), ընտրութիւնը անպատճառ կատարւում է թերթիկներով, եթէ այդ պահանջեն ժողովա-

կաններից առ նւազն հինգ հոգի :

49. Եթե ը՞ տրութիւնը թելթիկներով է կատարւում՝ ընտրողական թերթիկները նշանակւում են համարներով, նշնուում են նախագահի ստորագրութեամբ կամ կնքով, հաշով բաժանւում են ժողովականներին, ձայնատւութիւնից յետոյ հաշուով հաւաքւում և ընտրութեան արդիւնքը տրանազրելուց յետոյ՝ անմիջապէս և տեղնոււտեղը ոչնչացւում են :

50. Եթէ որ և է պաշտօնի համար ընտրւելու են մի քանի անձինք և ընտրութիւնը կատարւում է թելթիկներով (յօդ. 48)՝ իւրաքանչիւր ժողովական իրաւունք ունի իւր ընտրողական թերթիկի վրայ՝ փիխանակ տարբեր մալդկանց անուններ զրելու, զլել միենուն մարդու անունը այնքան անգամ՝ որքան հոգի են ընտրւելու։ Քւէարկւողը համարւում է ստացած ալնդան ձայն, որքան անգամ որ նրա անունը կլինւած է թերթիկներում։

51. Քւէարկւթեան ենթարկւած թեկնածուների ստացած գւէները համարւում են և ձայնելի սուաւելութեան կարգով ցուցակագրւում։ Սմենից շատ ձայն ստացողը համարւում է առաջին ընտրեալ, նրանից պակաս ստացողը՝ երկրորդ ընտրեալ, և այսպէս աւտինաճանաբար, մինչեւ որ լրանայ ընտրեի պաշտօնեանելի հարկաւոր թիւը։ Սոյն այսինքն ստացած գւէների սուաւելութեան՝ կար-

դով դասաւորւում են և անձնափոխանորդները։

52. Միայն այն ձայնատւութիւնը կանոնաւոր կարող է համարւել, որին մասնակցն է՝ նիստի բացման ժամանակ ներկալ եղող՝ իրաւասուների գւէների կիւից աւելին։

— Միայն այն վճիռը կամ ընտրութիւնը կայացած և վաւերական է համարւում, որ ստացել է յօդուտ իւր՝ նիստի բացման ժամանակ ներկալ եղող՝ իրաւասուների գւէների կիւից աւելին։

53. Ծխական ժողովը փակւելուց առաջ քարտուղարը կարդում է իւր կազմած արձանագրութիւնը, որի մէջ յաջորդական կարգով արձանագրւած են լինում ժողովի բոլոր անցքերը և վճիռները։ Մանրամասնորէն արձանագրւում են՝ նախահանի կումից կարգի հրաւիրման, ձայնից զրկելու և ժողովից հեռացնելու գէպլէերը։ Արձանագրութիւնը կարգացւելուց յետոյ՝ ուղւում են սպրած սխալները՝ և ասլա բոլոր ժողովականները ստորագրում են նոյն ադ ժողովում։

54. Ծխական ժողովի վճիռների և ընտրութիւնների գէմ բոլոք ունեցող ժողովականներն իրաւունք ունին արձանագրութեան տակ իրանց ստորագրութեան վրայ աւելացնել միայն այս երկու բառը «բոլոք ունիմ»։ Բոլոք ունեցողն երեք օրւայ ընթացքում տակիս է իւր գրաւոր բոլոքը նախագահին կամ քարտուղարին արձանագրութեանը կցելու համար։ Բոլոքողն իրաւունք ունի

իւր բողոքի պատճենը վաւերացնել տալ նախադահի և քարտուղարի ստորագրութեամբ, իւր մօտշ պահելու համար:

55. Ծխական ժողովի բողոքաւոր վճիռների արձանագրութեանց պատճենները՝ ժողովի օրից առ առաւելն մի շաբաթւակ ընթացքում նախագահը պարտաւոր է ուղարկել մերձաւոր Հոգեոր իշխանութեան միջոցով թեմական իշխանութեանը, Թեմական իշխանութեան վճռի կամ բացատրութեան դէմ, հարկ եղած դէպքում, կարելի է բողոքել Հոգեոր Բարձրագոյն իշխանութեան:

56. Այն անբողոք վճիռները, որոնք վերաբերում են ծխական ժողովի իրաւասութեան պատկանող գործերին (յօդ. 19), անմիջապէս գործադրում են, բացի յատկապէս լիշտածներից:

57. Այն պաշտօնեանների ընտրութիւնը, որոնք Հոգեոր կոչումն են ընդունելու (չորս աստիճանաւորի, սարկաւագի և քահանալի)՝ մերձաւոր Հոգեոր իշխանութեան ձեռքով ներկայացւում է Թեմական Խորհրդին ի պատշաճաւոր տնօրէնութիւն:

58. Երեսփոխի և ծխական խորհրդականների ընտրութիւնը և հեռացումը հաղորդւում է ի հաստատութիւն և ի գիտութիւն Թեմական Խորհրդին:

Թեմական Խորհրդութը եթէ գտնի, որ ընտրւած համապատասխան չէ կանոններումս նշանակւած որ

և է օրինական պահանջի, առ առաւելն երկու ամսուայ ընթացքում լայտնում է այդ մասին թեմական ժողովին: Երկու ամսուայ ընթացքում Թեմական Խորհրդից պատասխան չստացւելու դէպքում ծխական ժողովի վճիռն անմիջապէս գործադրում է և ընտրւածներն ստանձնում են իրանց պաշտօնները:

— Երկու ամսին հաշեում է ընտրութեան օրից:

59. Հոգեոր պաշտօնեանները ընտրելիս ծխական ժողովը պիտի անշեղ կերպով առաջնորդւի հետեւեալ հրահանգով.

ա) Ընտրելինները պիտի համապատասխաննեն մեր եկեղեցու ընդհանուր կանոնական պահանջներին՝ և մանաւանդ հետեւեալ պայմաններին. պիտի օժտւած լինեն բարուական արժանիքներով և ունենան քաղաքների համար առ նւազն թեմական կամ այլ միջնակարգ դպրոցի աւարտման վկայագիր. իսկ զիւղերի համար առ նւազն չորս դասարանի վկայագիր. լիսուն տանից պակաս գիւղի համար առ նւազն թեմական կամ այլ միջնակարգ դպրոցի երկրորդ դասարանի վկայագիր: Ոչ հայոց դպրոցներում կրթւածները կրօնական առարկաներից և Հայոց լեզուից՝ պահանջւած ծրագրով քննութիւն պիտի տան որ և է Հայոց

դպրոցում:

- թ) Վկայագիր չունեցողները պիտի պատշաճաւոր գննութիւն տան՝ պահանջւելիք առարկաներից վկայագիր ձեռք բերելու համար՝ միայն թեմական դպրոցներում կամ ու էջմիածնի Հոգ. ծեմարանում:
- դ) Ընտրւածի բարոյական անարատութեան մասին վկայելու է ծխական ժողով:
60. Հոգեոր պաշտօնեաների ընտրութիւն կառող է լինել միայն այնպիսի ծխական ժողովում, որին մասնակցում են՝ ընտրութեան քաղաքում կամ գիւղում բնակւող՝ նոյն եկեղեցու բոլոր ծըխական իրաւասուների երկու երրորդականը (<sup>2</sup><sub>3</sub>):
61. Հոգեոր պաշտօնեալ ընտրւած կարող է համարւել միայն նա, ով ստացել է յօգուտ իւր ընտրութեան քաղաքում կամ գիւղում բնակւող՝ նոյն եկեղեցու կամ ազօթտան բոլոր ծխական իրաւասուների ձախների կիսից աւելին:
62. Գիւղերում հոգեոր պաշտօնեաների ընտրութիւնը կատարուում է անսպատճառ գործակալ քահանայի կամ աեղական Յաջորդի ներկայութեամբ և նախագահութեամբ:
63. Ծխական համայնքը հոգում է իւր հոգեոր պաշտօնեաների տնտեսականը հետևեալ զանազան եղանակներով, ըստ որոշման ծխական ժողովի.
- ա) Մշտական ո.ոճիկ, որ սահմանում է ծխա-

կան ժողովը.

- բ) Տուրքեր, որ ստանում են հոգեոր պաշտօնեանները հոգեոր ծխակատարութեանց համար.

գ) Կամաւոր նւիրաբերութիւններ.

դ) Գիւղերում — հոգ, կալամաս (տարեհախ):

64. Հոգեոր պաշտօնեաների սովորոյթով լոգունած հասութները կարելի է փոխարինել ոռնկով այնպիսի ծխական ժողովում և ձախների այնպիսի մեծամասնութեամբ, որ պահանջում են այս կանոնագրութեան 60 և 61 յօգւածները:

65. Իւրաքանչիւր ծխական համայնք ինքն է կառավարում և տնօրինում ծխական ժողովի միջոցով իւր գոյքը (բոլոր շարժական և անշարժակայքը) յօգուտ նոյն ծխական եկեղեցու հիմնարկութիւնների և անձերի:

— Նոյն ծխական համայնքի ըրջանից դուրս անելիք ծախսերի համար անհրաժեշտ է Բարձրագոյն Հոգեոր իշխանութեան թույլտուութիւնը:

66. Առանց ծխական ժողովի համաձայնութեան նոյն ծխական եկեղեցուն յատկացւած և պատկանող գոյքից (բոլոր շարժական և անշարժ կայքից) ոչ մի ծախք լինել չէ կարող:

67. Ելեսփոխը ծխական խորհրդի գանձապահն է և պարտաւոր է գանձել, պահել և չահեցնել ծխական հասութներն ու արդիւնքները, կատարել

Եկեղեցու համար անհրաժեշտ ծախքեր. — մինչև  
15 թուման՝ ինքնագլուխ, աւելի ծախքերի համար՝  
**մինչև** 50 թումանի՝ ստանալով ծխական ժողովի  
համաձայնութիւնը և գործակարական խորհրդի  
գրաւոր թույլութիւնը, աւելի մեծ ծախքերի հա-  
մար — թեմական խորհրդի թույլութիւնը. Հա-  
ւագել և ամեն երեք ամիսը մի անգամ ուղարկել  
գործակարական խորհրդին թեմապատկան հասովթ-  
ներն ու արդիւնքները:

68. Տնտեսական, այսինքն գրամական և գոյքի  
վերաբերեալ, այն ինդիրներն որոշելու համար,  
որոնց գումարը անցնում է ծխական եկեղեցու տա-  
րեկան եկամուտից կամ լամենալն գէպս գիւղերում  
լիսուն (50) թումանից, իսկ քաղաքներում երեք  
հարիւր (300) թումանից՝ — պահանջում է, որ  
վճիռը ստանալ լոգուտ իւր սովորական ծխական  
ժողովին (տես յօդ. 24, 26) ներկալ իրաւասունե-  
րի ձաների երկու երրորդականից (2½) ոչ պակաս:

69. Նոր ծխական տուրքեր սահմաններու կամ  
հները փոփոխելու համար պահանջում է վերալի-  
շեալ 68 լոգուտում սահմանւած ձաների մեծա-  
մասնութիւնը:

70. Ծխական եկեղեցապատկան գրամագլուխնե-  
րը տոկոսվ աճեցնելու համար պիտի լանձնւին  
սկսական կամ հասարկական բանքային հաստա-  
տութեանց: Այս գրամագլուխները կարելի է նաև

մասնաւոր մարդկանց լանձնել՝ եթէ եկեղեցու հա-  
մար այդ լաբար և ձեռնտու դատւի և լանձն-  
ւելիք զումարը հաստատ գրաւականով ապահովեի  
միայն թէ Թէ Յորհրդի թույլութեամբ և պա-  
տասխանատութեամբ:

71. Այն բոլոր ծխական եկեղեցիները, որոնք տա-  
րեկան հինգ հարիւր (500) թումանից աւելի եկա-  
մուտ ունին, պէտք է իւլագանչիւր տարւայ սկզբում  
ծխական ժողովով իւրանց տալեկան ել և մուտքի  
նախահաջիւը (լիւչէ) կազմեն, թեմական իշխա-  
նութեան հաւտատել տան և անցեալ տարւայ հա-  
շիւն ու զեկուցումը երեսվուխից ու ծխական խոր-  
հրդից ստանալուց և ժողովում քննելուց յետոյ՝  
պէտք է տաղաբեր տան այդ բոլորը, ծխական ի-  
րաւասուներին բաժանելու համար:

Այդ տաղաբերած տեղեկագրից երկու օրինակ  
ուղարկում է Վեհափառ Հայրապետի Դիւանը և  
մի մի օրինակ Թեմական և Գործակարական Խոր-  
հրդիներին և Ս. Եջմիածնի պաշտօնական թերթին:

72. Կւրաքանչիւր ծխական եկեղեցի պիտի ու-  
նենալ մի ստոյգ և մանրամասն ժապաւինեալ մտ-  
տեան եկեղեցու անշարժ գոյքը, անօթեղէններն  
և այլ իրերը և դրամագլուխները ցուցակագրելու  
համար, նաև այն բոլոր եկամուտների համար,  
որոնք որ և է իրաւանքով հասնելու են նոյն  
ծխական եկեղեցուն: Նոյնակես պիտի ունենայ մի

ուրիշ «Ելեմտից ժապաւինեալ հաշւեմտեան» ծխական եկեղեցու տարեկան բոլոր ելք ու մուտքը գրելու:

73. Ծխական եկեղեցու դույի կառավարութեան ընթացիկ գործավարութեան համար ծխական ժողովն ընտրում է մի երեսփոխ չորս տարի ժամանակով։ Հին երեսփոխը կարող է վերնտրւել միմիան այն գէպգում, եթէ նրա հաւեւելը գննւած են ծխական խորհրդից և ճանաչւած են ծխական ժողովից իրբե ստուգ և անջերի, այլ և նրա գործավարութիւնն՝ անպարսաւ։

74. Նոր երեսփոխ ընտրելուց առաջ ծխական ժողովը պէտք է նախ գննէ հին երեսփոխի հաշիւները և ծխական խորհրդի զեկուցումը նրա գործավարութեան մտաին, և ապա կատարէ նոր երեսփոխի ընտրութիւնը։ Իսկ եթէ երեսփոխը ժամանակին չներկայացնէ հաշիւները, կամ եթէ ներկայացրած հաշիւները ծխական ժողովից կշամարւին անբաւարար կամ վիճելի — այս գէպգում՝ անմիջապէս կշանաբարկուի նոր երեսփոխի ընտրութեանը, իսկ հին երեսփոխը կհամարւի պաշտօնից հեռացած և պատասխանատու իւր գործավարութեան և հաշիւների համար։

— Այս գէպգում երեսփոխական գործավարութիւնը մինչեւ նոր երեսփոխի պոշտօնավարութեան մտնելը՝ ստանձնում է ծխական խորհրդից՝

ինչպէս այդ նախատեսւած է այս կանոնադրութեան 87 յօդւածով։

— Նոյն այս ժողովում՝ հարկ եղած գէպգում՝ կարելի է որոշել և հին երեսփոխին դատի ենթարկել (տես յօդ. 19 բ. և ը.)։

75. Նոր երեսփոխին իւր պաշտօնը ստանձնելիս պարտաւոր է ստուգել եկեղեցապատկան բոլոր գույքի (շարժական և անշարժ) անջերի և տմլողի լինելը և ընդունել իւր նախորդից՝ 72 յօդ. հիման վրայ կազմւած ցուցակով։

76. Հին երեսփոխը չարունակում է իւր պաշտօնավարութիւնը մինչեւ որ նոր երեսփոխը կըստանձնէ իւր պաշտօնը և իւր նախորդից յանձնողական ստացողական ցաւցակով կնդունէ ծխական եկեղեցու բոլոր գույքը (անշարժ և շարժական, տես յօդ. 72 և 74)։

77. Եկեղեցու գույի ամբողջութեան վրայ հշակելը, եկեղեցու արգիւնքների կառավարութիւնը, եկեղեցու գործերի պատշաճաւոր ատենական տեղերում պաշտպանութիւնը, եկեղեցական շէնքերի կառուցումը, վերանորոգումը, վարձով տալը և բոլոր նման գոլծերը մտնում են երեսփոխի պարտաւորութեանց շրջանը։ Սա առ հասալակ գործում է իբրև հաւատարմատար և գիմաց ծխական համայնքի։ Իսկ կարեւոր գործերում նա իրաւունք ունի այսհանչելու ծխականների լստ կալելոյն

լազմամարդ ժողովից առանձին հաւատարմաթուղթ։ Ստանալով այս հաւատրմաթուղթն այն գործերի համար, որ այս ծխական ժողովումն են որոշւած՝ նա արդէն ազատ է ամեն տեսակ պատասխանատւութիւնից ծխական համայնքի առաջ։

78. Երեսփոխանց առանց ծխական ժողովի վճռի իրաւունք չունի ծախսերու 15 թումանից աւելի։ Խըրագանչիւր ծախսի համար պահանջւում է ըստացողի ստորագրութիւն։ «Ելևմտից մատեանում», իամ առանձին ապացուցաթուղթ ստացողի ստորագրութեամբ։

79. Քաղաքներում ծխական եկեղեցու գումարներից երեսփոխներն իրաւունք չունին լիսուն (50) թումանից աւելի առձեռն գրամ պահելու մօտերը։ Աւելի գումարները պիտի լանձնուին պետական և հաւաքական բանքալին հաստատութեանց (տես յօդ. 70) ծխական եկեղեցու անունով։ Այդ գրամատներից փող ստանալու համար երեսփոխը պիտի ունենալ ծխական ժողովի համաձայնութեան թուղթը (համախօսականը)։

80. Գիւղերում իւրաքանչիւր վեց ամիսը մի անգամ երեսփոխը և ծխական խորհուրդը գանձանակը և հաշիւները ստուգելուց յետոյ — 12<sup>1/2</sup> թումանից աւելի եղած գումարը լանձնում են բանքալին հաստատութեանց, այնպէս ինչպէս ալդ բացատրւած է նախնթաց 79 յօդւածում։

81. Ծխական եկեղեցու ունեցած՝ գրամատների անդորրագրերը, բանքալին տոմսերը, մուրհակները և առհասարակ արժէթղթերը, եթէ գրանց բոլորի գումարը միասին հազարից (500թ.) աւելի չէ, կարող են պահւել երեսփոխի մօտ, իսկ եթէ հազար ըստըլուց աւելի է՝ պէտք է պահւելին Գործակալական կամ Թեմ։ Խորհրդի աւանդների գրամարկում և կամ բանքալին հաստատութեանց մէջ, ծխական եկեղեցու անունով, ըստ որոշման ծխական ժողովի (հմմտ. յօդ. 79)։

82. Իւրաքանչիւր ծխական եկեղեցին ունի իւր ծխական խորհուրդը, որը կազմւում է նոյն եկեղեցու աւագ քահանալից, երեսփոխից և Յ ծխական խորհրդականներից, որոնց ընտրում է ծխական ժողովը չորս տարի ժամանակով իւր գրագէտանդամներից և առաջարկում Թեմ։ Խորհրդին ի հաստատութիւն։

83. Բացի հերթական նիստերից, որ լինում են թեմական ժողովից որոշւած օրերը, կարող են ինել ծխական խորհրդի նաև արտակարգ նիստեր աւագ քահանալի հրաւերով։

84. Ծխական Խորհուրդը պարտաւոր է անընդհատ հետեւել երեսփոխի գործավարութեանը, իւրաքանչիւր ամսւալ վերջը ստուգել հաշիւները և մատեանները և վաւերացնել իւր ստորագրութեամբ, իսկ իւրաքանչիւր տարւալ վերջը ծխա-

կան ժողովին հագամանօրէն զեկուցում ներկայացնել իւր հաշւետեսութեան և երեսփոխի գործավարութեան և հաշիւների մասին։

85. Ինչպէս հոգեոր իշխանութեան ներկայացուցիչներին նոյնպէս և ծխական խորհ գին՝ ասեն անգամ երբ սրանք պահանջեն, եւեսփոխանները պարտաւոր են անյապաղ ներկայացնել իրանց բոլոր մատեանները և հաշիւները։

Ծխական խորհ գին վելահսկողութեան և հաշւառութեան նոյն պարտականութիւններն ու իրաւունքներն (տես յօդ. 84 և 85) ունին նաև 19 յօդ. է. և ժ. կէտերում լիշւած հոգաբարձուների և հոգաբարձական լանձնաժողովների նկատմամբ։

87. Ծխական խորհուրդը ստանձնում երեսփոխի գործավարութիւնը ըստ կարելոյն կարճ միջոցով, եթէ երեսփոխն իւր պաշաօնավարութեան ժամանակը լրանալուց առաջ վախճանւում է կամ անակնկալ պատճառով ստիպւած է լինում առ միշտ թողնել պաշտօնը։ Այսպիսի գէպքում ծխական խորհուրդը պարտաւոր է անմիջապէս ծխական ժողով հրաւիրել նոր երեսփոխ ընտրելու համար։

88. Իւրաքանչիւր քահանալի ծխական ժողովից տրուում է մի ժամանակնեալ մատեան, որի մէջ քահանան պարտաւոր է ճշտիւ արձանագրել իւր

բոլոր ծխերը, դրանց բոլոր արական և իգական անդամներով։ Մատեանում իւրաքանչիւր ընտանիքի առ նւազն լատկացւում է մի թերթ։ Այդ մատեանում արձանագրուում է իւրաքանչիւր ծխականի անունը, ազգանունը, ծննդեան օրը և տարին, նաև մատեանում արձանագրելու օրը։

— Օր աւուր այդ մատեանում նշանակում է քահանան իւր ծխերի մեջ եղած ծնունդը՝ իւրաքանչիւր ընտանիքի թերթում, նաև վախճանւածներին և ծխականութիւնից հրաժարւածներին։ Մատեանը պահում է եկեղեցում։ Այդ մատեանումն են արձանագրուում նաև բոլոր նորեկ ծխականները (տես յօդ. 9)։

89. Ամեն տարի հոկտեմբեր — նոյեմբեր ամիսներին ծխական եկեղեցու քահանաները ծխական խորհ գին հետ կազմում են մի ցուցակագրող լանձնաժողով և քաղելով քահանաների մատեաններից (տես յօդ. 88) կազմում են ծխական իրաւասուների տարեցուցակ՝ ուր արձանագրւած պիտի լինին այն բոլոր կենդանի ծխականների անունները (տես յօդ. 12), որոնք արգէն հասել են կամ լաջորդ տարւալ ընթացքում հասնելու են 21 ամեալ հասակին (տես յօդ. 11)։

90. Ծխական իրաւասուների տարեցուցակը պարզ և մաքուր գրուում է և նոյեմբերի 20-ից ոչ ուշ կախւում է եկեղեցու ներսում և գրսում մուտքի

Դրան մօտ և մնում է ալգտեղ մինչև յաջորդ տար-  
ւալ ցուցակի կախելլը։ Հին տարեցուցակը վերց-  
ւում է նորը կախելիս։ Մի մի օրինակ ալդ տա-  
րեցուցակից ուղարկւում է Գործակալական և Թե-  
մական խորհրդներին։

91. Իւրաքանչիւր ծխական իրաւունք ունի  
բողոքելու ցուցակագրող լանձնաժողովի կազմած  
տարեցուցակում սպրդած սխալների դէմ նախ ի-  
րան լանձնաժողովին։ Եթէ ցուցակագրող լանձնա-  
ժողովը չլարդէ բողոքը, բողոքատուն իրաւունք  
ունի դիմել ծխական ժողովին, որն և տալիս է  
վերջնական վճիռ, նախ քան օրակարգի հերթական  
հարցերին անցնելը։

92. Ամեն մի ծխական եկեղեցու կամ աղօթա-  
տան տարեկան ընհանուր եկամուտի մի տոկոսը  
( 1 օ% ) իւրաքանչիւր տարւալ վերջում ուղարկ-  
ւում է մերձաւոր Հոգեոր իշխանութեան ձեռքով  
և Էջմիածնի Սինոդը՝ Մալք Աթոռի գանձարա-  
նում պահելու համար իբրև յատուկ՝ ծխական ե-  
կեղեցիների պահեստի՝ գումար։

93. Ալդ տոկոսը ( լոդ. 92 ) վճարելուց աղատ  
են բոլոր այն ծխական եկեղեցիները և աղօթա-  
տաները, որոնց տարեկան եկամուտը չէ հասնում  
հարիւր ( 100 ) ըուբլու։

94. Բոլոր այն ծխական եկեղեցիները, որոնց  
տարեկան եկամուտը հազար ( 500 թ. ) ըուբլուց ա-

ւելի է, մի հազարից աւելի գումարների՝ համար  
մինչև տասն հազար ըուբլին՝ վճարում են ծրխա-  
կան պահեստին երկու տոկոս ( 2 օ% )։

95. Բոլոր այն ծխական եկեղեցիները, որոնց  
տարեկան եկամուտը տասն հազար ըուբլուց ա-  
ւելի է, տասն հազարից աւելի գումարների հա-  
մար՝ վճարում են ծխական պահեստի գումարին  
երեք տոկոս ( 3 օ% )։

96. Ծխական եկեղեցիների պահեստի գումարը  
գործադրում է միմիայն ամենակարօտ ծխական  
եկեղեցիների ամենակարենոր պէտքերին, Վեհա-  
փառ Հալրապետի բարեհաճութեամբ, ո. Էջմիած-  
նի Սինոդի որոշմամբ, Կոնսիստորիաների միջնոր-  
դութեամբ և կարօտ ծխական համալիքների խըն-  
դիրներն ի նկատի առնելով։


97. Ծխական պահեստի գումարից տրւած նը-  
պաստների մասին մանրամասն հրատարակւում է  
Ա. Էջմիածնի պաշտօնական թերթում։

98. Ծխական ժողովներն իրաւունք ունին պատ-  
ճառարանւած միջնորդութիւններ յարուցանել Վե-  
հափառ Հալրապետի անունով տւած խնդրագրե-  
րով՝ այս կանոնադրութեան այս կամ այն կէտի  
փոփոխութեան համար։ Ալդ միջնորդութիւնները  
կապհւին Վեհափառ Հալրապետի Պիւանում, ծա-  
ռայելու համար իբրև նիւթ այս կանոնադրութեան  
ապագայ բարեփոխութեանց։

99. Ոռւսաց պետութեան սահմաններից դուրս  
(Պարսկաստան, Հնդկաստան, Տաճկաստան, Եգիպ-  
տոս, Բուլղարիա, Ոռումանիա, Կիպրոս, Եւրոպա,  
Ամերիկա և լն.) հայ համայնքներն, այս կանոնա-  
դրութիւնը լաբմարեցնելով իրանց տեղական պէտ-  
քերին և եկեղեցական կազմակերպութեանը՝ ներ-  
կայացնում են Վեհափառ Հայրապետին ի հաս-  
տատութիւն :

100. Այս ծխական կանոնադրութեան պաշտօ-  
նական հրատարակմամբ և գործադրութեամբ դա-  
դարում են Հոգեոր բարձրագոլն, թեմական և  
տեղական իշխանութիւնների կողմից այս առար-  
կայի վերաբերութեամբ տրւած այն բոլոր թէ  
ընդհանուր և թէ մասնական կանոններն ու ՀՀ-  
րահանգները, որոնք չեն ստացել պետական իշ-  
խանութեան հաստատութիւնը :

Ա Երջ.



## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ.

---

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ  
ԱՐԱԳԱԾԻԳ ՏՊԱՐԱՆԻ ՎԱՐ-  
ՉՈՒԹԻՒՆԸ ՊԱՏԻՒ ՈՒՆԻ ՅԱՅ-  
ՏԱՐԱՐԵԼՈՒ, ՈՐ ԸՆԴՈՒՆՈՒՄ  
Է ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ՊԱՏԻՔՆԵՐ  
ՀԱՅԵՐԵՆ, ԹՄԵՐԵՆ, ՓԲԱՆԱ-  
ՐԵՆ ԵՒ ՊԱՐՄԿԵՐԵՆ, ԼԵԶՈՒ-  
ՆԵՐՈՎ. ԳՆԵՐԸ ՄԱՅՏԵԼԻ ԵՆ.  
ՊԱՏԻՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԻՈՒՄ ԵՆ  
ԽՆԱՄՔՈՎ ԵՒ ՇՈՒՑ:

ՆՈՅՆՊԵՍ ՅԱՅՏԱՐԱՐՈՒՄ Է  
ԲՈԼՈՐ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ, ՈՐ ՈՒ-  
ՐԱԽՈՒԹԵԱՄԲ ՅԱՆՉՆ Է ԱՌ-  
ՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿԵԼ ԺՈՂՈՎՐ-  
ԴԱԿԱՆ ՄԱՅՏԵԼԻ ԳՐՔԵՐ, ՏԱ-  
ԼՈՎ ՀԵՂԻՆԱԿՆԵՐԻՆ ԶՈՓՈ-  
ՒՈՐ ԵՒ ՀԱՄԵՍ ՎԱՐՉԱՏՐՈՒ-  
ԹԻՒՆ:



